# Նախադպրոցական գրականություն






**Նախադպրոցական**

Հայերեն
2010 թ., 20 x 26 սմ, 160 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-52-242-5

2500դր

Հղում

# Աղբյուր, դասագիրք-տետր

*Ա. Աբրահամյան, Ա. Քյուրքչյան, Լ. Տեր-Գրիգորյան*

«Աղբյուր» գիրք-տետրը նախատեսված է 5-6 տարեկան երեխաների համար: Այն ընդգրկում է վեցական էջից կազմված 22 թեմատիկ միավորներ, որոնցից յուրաքանչյուրում երեք էջ հատկացված է մայրենի լեզվին, երկու էջ` մաթեմատիկային, մեկ էջ` ընդհանուր ամփոփմանը:

«Աղբյուրը» կնպաստի երեխայի բառապաշարի հարստացմանը, մտածողության ու տրամաբանության զարգացմանը, լեզվական, մաթեմատիկական և ճանաչողական բազմակողմանի գիտելիքներ կհաղորդի երեխային, ձեռքը կվարժեցնի գրելուն: Այն կնպաստի երեխայի ընդհանուր զարգացմանը, կնախապատրաստի նրան դպրոցին: Երաշխավորել է ՀՀ ԿԳՆ Ազգային ինստիտուտը:




**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ., 20 x 29 սմ, 32 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-516-8

800դր

Հղում

# Սովորում ենք նկարել 2-3 տարեկանում / Նկարչական ալբոմ

*Ժաննա Ավետիսյան*

Նկարչական ալբոմ՝ նախատեսված 2-3 տարեկան երեխաների համար: Ալբոմի առաջադրանքներում պահպանված են «Կերպարվեստի մեթոդիկայի» ծրագրային պահանջները, ուսուցման սկզբունքները և տարիքային խմբին ներկայացվող պահանջները: Ալբոմը հնարավորություն է տալիս ծանոթանալ նկարչական միջոցներին և սովորել գծանկարի ու գունանկարի «այբուբենը»: Ալբոմում պարապմունքները ներկայացված են ուղեկցող գունազարդ նկար-առաջադրանքներով, որոնք ունեն 3 մակարդակ՝ հուշող, օգնող, ուղղորդող: Այսպիսի կառուցվածքը հնարավորություն է տալիս նաև ներառական խմբի երեխաներին հեշտությամբ ինտեգրվել ներկայացված առաջադրանքների կատարմանը:




# Սովորում ենք նկարել 2-3 տարեկանում / Մեթոդական ուղեցույց

*Ժաննա Ավետիսյան*

**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ., 14.5 x 20 սմ, 48 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-523-6

900դր

Հղում

Սույն մեթոդական ուղեցույցը նախատեսված է «Սովորում ենք նկարել 2-3 տարեկանում» նկարչական ալբոմում տեղ գտած առաջադրանքների բովանդակությունը պարզաբանելու համար: Կազմված է կրտսեր առաջին խմբի համար նախատեսված կերպարվեստային պարապմունքների թեմատիկ պլանավորման ձեռնարկի պահանջներին համապատասխան: Առաջադրված պարապմունքների հիմքում դրված են գծանկարչության և գունանկարչության պարզագույն խնդիրներ, որոնց նպատակն է զարգացնել գունազգացողության, գունային համադրությունների ուրախ խաղերը տեսնելու, զգալու և ստեղծելու կարողություններ:




# Սովորում ենք նկարել 3-4 տարեկանում / Նկարչական ալբոմ

*Ժաննա Ավետիսյան*

Նկարչական ալբոմ՝ նախատեսված 3-4 տարեկան երեխաների համար: Ալբոմի առաջադրանքներում պահպանված են «Կերպարվեստի մեթոդիկայի» ծրագրային պահանջները, ուսուցման սկզբունքները և տարիքային խմբին ներկայացվող պահանջները: Ալբոմն ունի ուսուցողական և ճանաչողական նշանակություն՝ հնարավորություն տալով ծանոթանալ նկարչական միջոցներին: Պարապմունքները ներկայացված են ուղեկցող գունազարդ նկար-առաջադրանքներով, որոնք ունեն հուշող, օգնող, և ուղղորդող բնույթ: Այսպիսի կառուցվածքը հնարավորություն է տալիս նաև ներառական խմբի երեխաներին հեշտությամբ ինտեգրվել ներկայացված առաջադրանքների կատարմանը:

**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ., 20 x 29 սմ, 32 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-517-5

800դր

Հղում




**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ., 14.5 x 20 սմ, 56 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-75-523-6

900դր

Հղում

# Սովորում ենք նկարել 3-4 տարեկանում / Մեթոդական ուղեցույց

*Ժաննա Ավետիսյան*

Սույն մեթոդական ուղեցույցը նախատեսված է պարզաբանելու «Սովորում ենք նկարել 3-4 տարեկանում» նկարչական ալբոմում տեղ գտած առաջադրանքների կառուցվածքը և բովանդակությունը, որը կազմված է կրտսեր երկրորդ խմբի համար նախատեսված կերպարվեստային պարապմունքների թեմատիկ պլանավորման ծեռնարկի պահանջներին համապատասխան:

Ներկայացված առաջադրանքների հիմքում դրված են նախորդ տարիքային խմբում ձեռք բերած նկարչության պարզագույն գիտելիքները և կարողությունները: Այստեղ արդեն նախորդ՝ ձեռք բերած գիտելիքները և կարողությունները պետք է շարունակել զարգացնել, խորացնել, ընդլայնել:




# Սովորում ենք նկարել 4-5 տարեկանում / Նկարչական ալբոմ

*Ժաննա Ավետիսյան*

Նկարչական ալբոմ՝ նախատեսված 4-5 տարեկան երեխաների համար: Ալբոմի առաջադրանքներում պահպանված են «Կերպարվեստի մեթոդիկայի» ծրագրային պահանջները, ուսուցման սկզբունքները և տվյալ տարիքային խմբին ներկայացվող պահանջները: Ալբոմն ունի ուսուցողական և ճանաչողական նշանակություն, ինչը հնարավորություն է տալիս ծանոթանալ նկարչական միջոցներին և սովորել գծանկարի և գունանկարի «այբուբենը»: Ալբոմում պարապմունքները ներկայացված են ուղեկցող գունազարդ նկար-առաջադրանքներով, որոնք ունեն 3 մակարդակ՝ հուշող, օգնող, ուղղորդող: Այսպիսի կառուցվածքը հնարավորություն է տալիս նաև ներառական խմբի երեխաներին հեշտությամբ ինտեգրվել առաջադրանքների կատարմանը:

**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ., 20 x 29 սմ, 64 էջ
Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-518-2

900դր

Հղում




# Սովորում ենք նկարել 4-5 տարեկանում / Մեթոդական ուղեցույց

*Ժաննա Ավետիսյան*

**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ., 14.5 x 20 սմ, 88 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-75-525-0

1000դր

Հղում

Սույն մեթոդական ուղեցույցը նախատեսված է պարզաբանելու «Սովորում ենք նկարել 4-5 տարեկանում» նկարչական ալբոմում տեղ գտած առաջադրանքների կառուցվածքը և բովանդակությունը, որը կազմված է միջին խմբի թեմատիկ պլանավորման ծեռնարկի նկարչության պարապմունքներին ներկայացվող ծրագրային պահանջներին համապատասխան:

Ներկայացված առաջադրանքների հիմքում դրված են նախորդ տարիքային խմբում երեխաների ձեռք բերած նկարչական փորձը, պարզագույն գիտելիքները և կարողությունները: Այս տարիքային խմբում, արդեն, նախատեսվում է շարունակել զարգացնել, խորացնել, ընդլայնել, ինչպես նաև տարբեր վարժություն-առաջադրանքների միջոցով ամրապնդել նկարչական կարողությունները:




# Սովորում ենք նկարել 5-6 տարեկանում / Նկարչական ալբոմ

*Ժաննա Ավետիսյան*

Նկարչական ալբոմ՝ նախատեսված 5-6 տարեկան երեխաների համար: Ալբոմի առաջադրանքներում պահպանված են «Կերպարվեստի մեթոդիկայի» ծրագրային պահանջները, ուսուցման սկզբունքները և տվյալ տարիքային խմբին ներկայացվող պահանջները: Ալբոմը հնարավորություն է տալիս ծանոթանալ նկարչական միջոցներին և սովորել գծանկարի և գունանկարի «այբուբենը»: Ալբոմներում պարապմունքները ներկայացված են ուղեկցող գունազարդ նկար-առաջադրանքներով, որոնք ենթադրում են 3 մակարդակ՝ հուշող, օգնող, ուղղորդող: Այսպիսի կառուցվածքը հնարավորություն է տալիս նաև ներառական խմբի երեխաներին հեշտությամբ ինտեգրվել ներկայացված առաջադրանքների կատարմանը:

**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ., 20 x 29 սմ, 72 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-519-9

900դր

Հղում




# Սովորում ենք նկարել 5-6 տարեկանում / Մեթոդական ուղեցույց

*Ժաննա Ավետիսյան*

**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ., 14.5 x 20 սմ, 36 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-75-526-7

900դր

Հղում

Սույն մեթոդական ուղեցույցը նախատեսված է պարզաբանելու «Սովորում ենք նկարել 5-6 տարեկանում» նկարչական ալբոմում տեղ գտած առաջադրանքների կառուցվածքը և բովանդակությունը: Ալբոմը կազմված է ավագ խմբի կրթական համալիր ծրագրի՝ նկարչության պարապմունքներին ներկայացվող թեմատիկ պլանավորման և չափորոշչային պահանջներին համապատասխան:

Ներկայացված առաջադրանքների հիմքում դրված են նախորդ տարիքային խմբերում երեխաների ձեռք բերած նկարչական փորձը, պարզագույն գիտելիքները և կարողությունները: Պարապմունքներում պահպանված է միջառարկայական կապը՝ խոսքի զարգացում, մաթեմա-տիկա, ֆիզկուլտուրա, երաժշտություն:




# Կերպարվեստային դիդակտիկ խաղ-պարապմունքներ / Ուսումնաօժանդակ ձեռնարկ

*Ժաննա Ավետիսյան, Գայանե Փոթիկյան*

«Կերպարվեստային դիդակտիկ խաղ-պարապմունքներ» ուսումնաօժանդակ ձեռնարկը նախատեսված է գործնական կիրառության համար նախադպրոցական կրթություն իրականացնող կառույցներում՝ անկախ նրանց ուղղվածության տեսակից և նրանցում իրականացվող ծրագրերից: Ձեռնարկում ներկայացված են ուսուցողական և ճանաչողական նշանակությամբ, ուրախ և զվարճալի, կերպարվեստային ընկալումները զարգացնող խաղեր:

**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ., 14.5 x 20 սմ, 48 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-75-527-4

1000դր

Հղում




# Ոչ ավանդական նկարչություն / Ուսումնաօժանդակ ձեռնարկ

*Ժաննա Ավետիսյան, Գայանե Փոթիկյան*

«Ոչ ավանդական նկարչություն» ուսումնաօժանդակ ձեռնարկը միտված է լրացուցիչ կրթությանն ու գործնական կիրառության նախադպրոցական կրթություն իրականացնող կառույցներում՝ անկախ նրանց ուղղվածության տեսակից և նրանցում իրականացվող ծրագրերից:

**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ., 14.5 x 20 սմ, 72 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-75-528-1

1500դր

Հղում




# Կախարդական քարտեր

*Մագնիսական քարտեր, տառեր, թվեր, երկրաչափական մարմիններ:*

Ներկայացված դիդակտիկ նյութերն ունեն ուսուցողական և ճանաչողական նշանակություն:
Դիդակտիկ նյութերի հավաքածուի առավելությունն այն է, որ դրանք ունեն կպչուն մագնիսական հատկություն և հեշտությամբ ամրանում են մագնիսական գրատախտակին: Բոլոր դիդակտիկ նյութերը՝ տառերը, թվերը և երկրաչափական պատկերները եզրագծված են դեղին երիզով, որը կապահովի տեսողության խնդիրներ ունեցող երեխաների ակտիվ մասնակցությունը պարապմունքներին:

Երկրաչափական պատկերների հավաքածուն իր մեջ ներառում է բազմագույն քառակուսիներ, եռանկյուններ, շրջաններ, օվալաձև պատկերներ, ուղղանկյուններ, որոնց օգնությամբ կարելի է հավաքել տարաբնույթ երկրաչափական հարթ կառուցումներ, ապլիկացիաներ:

**Նախադպրոցական**

Հայերեն
2020 թ.

Ստվարաթուղթ

6700դր

Հղում




# Քչից -շատից, ամեն ինչից
# Գիրք 1

*Նարինե Միրզոյան, Միքայել Միրզոյան*

«ՔՉԻՑ-ՇԱՏԻՑ, ԱՄԵՆ ԻՆՉԻՑ». նկարազարդ ուսուցողական մատենաշար երեքից վեց տարեկան երեխաների համար:

Երեխաները խիստ հետաքրքրասեր են. նրանց հետաքրքրում է շրջապատող ամեն ինչ՝ բույսերը, կենդանիները, մարդիկ, երկինքը, երկիրը: Նրանք փորձում են ընկալել այդ ամենը ամբողջովին, թեկուզ քիչ-քիչ: Այստեղից էլ անվանումը՝ «Քչից -շատից, ամեն ինչից»: Մատենաշարի հիմնական նպատակն է երեխային մատչելի լեզվով գիտելիքներ տալ ամեն ինչի մասին: Փոքրիկ ընթերցողի հետ զրուցում են իրեն հասակակից երկու երեխա՝ Անին և Արտեմը: Պատկերազարդ և բովանդակալից այս մատենաշարը երեխան հաճույքով կընթերցի, իսկ բազմաթիվ խաղերն էլ կզարգացնեն նրա միտքը, տրամաբանությունը, հիշողությունը և ուշադրությունը: Փոքրիկ ընթերցողին տրվում են տարբեր հարցեր, որոնց պատասխանելով՝ կսովորի արտահայտվել: Շոշափվում են նաև դաստիարակության, առողջության և հիգիենայի վերաբերյալ թեմաներ:

**Նախադպրոցական**
Հայերեն
2011 թ., 21 x 30 սմ, 48 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-52-320-0

Հղում




# Քչից-շատից, ամեն ինչից
# Գիրք 4

*Նարինե Միրզոյան, Միքայել Միրզոյան*

«ՔՉԻՑ-ՇԱՏԻՑ, ԱՄԵՆ ԻՆՉԻՑ». նկարազարդ ուսուցողական մատենաշար երեքից վեց տարեկան երեխաների համար:

Երեխաները խիստ հետաքրքրասեր են. նրանց հետաքրքրում է շրջապատող ամեն ինչ՝ բույսերը, կենդանիները, մարդիկ, երկինքը, երկիրը: Նրանք փորձում են ընկալել այդ ամենը ամբողջովին, թեկուզ քիչ-քիչ: Այստեղից էլ անվանումը՝ «Քչից-շատից, ամեն ինչից»: Մատենաշարի հիմնական նպատակն է երեխային մատչելի լեզվով գիտելիքներ տալ ամեն ինչի մասին: Փոքրիկ ընթերցողի հետ զրուցում են իրեն հասակակից երկու երեխա՝ Անին և Արտեմը: Պատկերազարդ և բովանդակալից այս մատենաշարը երեխան հաճույքով կընթերցի, իսկ բազմաթիվ խաղերն էլ կզարգացնեն նրա միտքը, տրամաբանությունը, հիշողությունը և ուշադրությունը: Փոքրիկ ընթերցողին տրվում են տարբեր հարցեր, որոնց պատասխանելով՝ կսովորի արտահայտվել: Շոշափվում են նաև դաստիարակության, առողջության և հիգիենայի վերաբերյալ թեմաներ:

**Նախադպրոցական**

Հայերեն
2012 թ., 21 x 30 սմ, 48 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-52-596-9

2850դր

Հղում




# Քչից-շատից, ամեն ինչից
# Գիրք 5

*Նարինե Միրզոյան, Միքայել Միրզոյան*

«ՔՉԻՑ-ՇԱՏԻՑ, ԱՄԵՆ ԻՆՉԻՑ». նկարազարդ ուսուցողական մատենաշար երեքից վեց տարեկան երեխաների համար:

Երեխաները խիստ հետաքրքրասեր են. նրանց հետաքրքրում է շրջապատող ամեն ինչ՝ բույսերը, կենդանիները, մարդիկ, երկինքը, երկիրը: Նրանք փորձում են ընկալել այդ ամենը ամբողջովին, թեկուզ քիչ-քիչ: Այստեղից էլ անվանումը՝ «Քչից -շատից, ամեն ինչից»: Մատենաշարի հիմնական նպատակն է երեխային մատչելի լեզվով գիտելիքներ տալ ամեն ինչի մասին: Փոքրիկ ընթերցողի հետ զրուցում են իրեն հասակակից երկու երեխա՝ Անին և Արտեմը: Պատկերազարդ և բովանդակալից այս մատենաշարը երեխան հաճույքով կընթերցի, իսկ բազմաթիվ խաղերն էլ կզարգացնեն նրա միտքը, տրամաբանությունը, հիշողությունը և ուշադրությունը: Փոքրիկ ընթերցողին տրվում են տարբեր հարցեր, որոնց պատասխանելով՝ կսովորի արտահայտվել: Շոշափվում են նաև դաստիարակության, առողջության և հիգիենայի վերաբերյալ թեմաներ:

**Նախադպրոցական**

Հայերեն
2013 թ., 21 x 30 սմ, 48 էջ

Կոշտ կազմ

ISBN 978-9939-52-744-4

2350դր

Հղում




**Նախադպրոցական / մեթոդական**

Հայերեն
2011 թ., 16.5 x 24 սմ, 256 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-52-327-9

2950դր

Հղում

# Տոնական ղողանջներ

*Լալա Սմբատյան*

Ժողովածուում հավաքագրված է նախադպրոցական ուսումնական հաստատությունների, նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների մասնագետներին: Այն ներառում է սցենարներ, օրինակելի պարապմունքների նկարագրություններ և նախադպրոցական մասնագետների ստեղծագործություններ, որոնք կօգնեն մանկավարժներին՝ շարունակելու իրենց որոնողական-ստեղծագործական աշխատանքը՝ ժամանակի ոգուն ու պահանջներին համապատասխան: Բաղկացած է «Զվարճալի ցերեկույթներ», «Պարապմունք-սցենարներ», «Մանկավարժները՝ մանուկներին» բաժիններից: Ժողովածուի նյութերը ոլորտի մասնագետներին կօգնեն շարունակել իրենց որոնողական-ստեղծագործական աշխատանքները:

# Մանկական գրականություն






# 850 x 1 հանելուկ

*Յուրի Սահակյան*

Գիրքը պարունակում է հայկական ժողովրդական հանելուկներ՝ Յուրի Սահակյանի մշակմամբ, ինչպես նաև ռուսական ժողովրդական և ռուս մանկագիրների հանելուկներ՝ Յուրի Սահակյանի թարգմանությամբ:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2011 թ., 14.5 x 20 սմ, 96 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-52-328-6

1550դր

Հղում




**Մանկական գրականություն**

Հայերեն
2013 թ., 20.5 x 20 սմ, 264 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-52-656-0

2350դր

Հղում

# Բառ ու բանի շտեմարան

*կազմեց Յուրի Սահակյանը*

Յուրի Սահակյանի «Բառ ու բանի շտեմարան» ժողովածուի մեջ ամփոփված են դասական ու ժամանակակից հեղինակների գործեր և հայ բանահյուսության լավագույն նմուշների մշակումներ: Մանկագրության այս բարի ծաղկաքաղն ընդգրկում է մի քանի տասնյակ գրողների ստեղծագործություններ, որոնք ներառված են թեմատիկ բաժիններում:

Ներկայացվող գործերը հնարավորություն կտան մանուկներին ճանաչելու մեզ շրջապատող աշխարհը, ընկալելու բնության գույներն ու ձայները, թափանցելու նրանց գաղտնարանները, հասկանալու և սիրելու գրականությունն ու մայրենին:




# Ընտիր հեքիաթների շարք / Հեքիաթային ճամփորդություն

*Կազմող՝ Նազելի Կարապետյան*

Ժողովածուում ընգրկված այս հեքիաթների հերոսները ճամփորդում են հեքիաթների զարմանահրաշ աշխարհում, որտեղ անցնելով բազմաթիվ փորձությունների միջով՝ ձեռք են բերում կյանքի մեծ փորձառություն և, ի վերջո, հասնում իրենց նպատակներին: Ընթերցողը ոչ միայն դառնում է այս յուրօրինակ հեքիաթային ճանապարհորդության ականատեսը, այլ նաև ակտիվ մասնակիցը:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 96 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-502-1

900դր

Հղում




# Ընտիր հեքիաթների շարք / ժողովրդական հեքիաթներ

*Կազմող՝ Նազելի Կարապետյան*

Պատկերազարդ ժողովածու, որում ներկայացված տարբեր ժողովուրդների հեքիաթները հնարավորություն են տալիս ծանոթանալ նրանց մշակույթի, սովորույթների ու կենցաղի առանձնահատկությունների, դրանց նմանությունների և տարբերությունների հետ:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 88 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-505-2

Հղում




# Ընտիր հեքիաթների շարք / Անտառային հեքիաթներ

*Կազմող՝ Նազելի Կարապետյան*

Այս ժողովածուի մեջ ներառված հեքիաթները բացահայտում են անտառների առեղծվածային ու սքանչելի աշխարհը, որը լի է ոչ միայն վտանգներով, այլ նաև հետաքրքրաշարժ արկածներով: Հեքիաթներից շատերում հերոսները կենդանիներն են, որոնք իրենց մեջ մարդկային հատկանիշներ են կրում:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 88 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-500-7

900դր

Հղում






# Ընտիր հեքիաթների շարք / Իմաստուն հեքիաթներ

*Կազմող՝ Նազելի Կարապետյան*

Այս ժողովածուի մեջ ընդգրկված հեքիաթները ոչ միայն պատմում են հետաքրքիր պատմություններ, այլ նաև տալիս կյանքի կարևոր դասեր ու իմաստուն խորհուրդներ: Գիրքը նախատեսված է թե՛ փոքրերի, թե՛ մեծերի համար, քանի որ ցանկացած տարիքում մարդը ունի իմաստության յուրօրինակ աշխարհը բացահայտելու կարիք:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 80 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-499-4

900դր

Հղում




# Ընտիր հեքիաթների շարք / Կախարդական հեքիաթներ

*Կազմող՝ Նազելի Կարապետյան*

Զարմանալի ու հիասքանչ է հեքիաթների աշխարհը՝ լի բազմաթիվ կախարդական երևույթներով: Աշխարհի տարբեր ժողովուրդների և հայ ժողովրդական հեքիաթների այս ժողովածուի ութ հեքիաթներից յուրաքանչյուրում կարելի է գտնել այդ կախարդանքից մի մասնիկ: Իսկ վերջում երկնքից երեք խնձոր կընկնի. մեկն ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ հեքիաթը հասկացողին:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 96 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-503-8

900դր

Հղում




# Ընտիր հեքիաթների շարք / Ուսուցողական հեքիաթներ

*Կազմող՝ Նազելի Կարապետյան*

Այս պատկերազարդ ժողովածուի մեջ ներկայացված հեքիաթները կյանքի յուրօրինակ ուղեցույց են երեխաների համար: Դրանցում առկա ուսուցողական մտքերը հիմք են լավ մարդ դառնալու ճանապարհին: Հեքիաթներում կարևորվում են մարդկային այնպիսի առաքինություններ, ինչպիսիք են աշխատասիրությունը, հաստատակամությունը, ազնվությունը, հարգանքը մեծերի նկատմամբ և այլն:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 88 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-507-6

900դր

Հղում




**Մանկական գրականություն**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 88 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-509-0

900դր

# Ընտիր հեքիաթների շարք / Զվարճալի հեքիաթներ

*Կազմող՝ Նազելի Կարապետյան*

Հեքիաթների այս ընտրանիում ներկայացված են զվարճալի պատմություններ տարբեր ժողովուրդների ու հայկական հեքիաթների շտեմարանից: Դրանք ցույց են տալիս, որ ցանկացած բարդ իրավիճակ հնարավոր է հաղթահարել լավատեսության շնորհիվ: Իսկ հերոսների հնարամիտ արարքներն ու սրամտությունները ժպտալու առիթներ են պարգևում ընթերցողին:




# Ընտիր հեքիաթների շարք / Ուրախ հեքիաթներ

*Կազմող՝ Նազելի Կարապետյան*

Հեքիաթների այս ժողովածուում ներառված են ուրախ պատմություններ տարբեր ժողովուրդների ու հայկական հեքիաթների գանձարանից: Այս հեքիաթները նույնպես ունեն խրատական և ուսուցողական բնույթ, որը, սակայն, մատուցվում է փոքր-ինչ այլ՝ ուրախ երանգներով:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 80 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-506-9

Հղում

# Ընտիր հեքիաթների շարք / Զարմանահրաշ հեքիաթներ

*Կազմող՝ Նազելի Կարապետյան*




Պատկերազարդ ժողովածու, որ ներառում է ինը զարմանահրաշ հեքիաթներ՝ ընտրված հայկական և աշխարհի ժողովուրդների հեքիաթների գանձարանից: Այս հեքիաթները ընթերցողին երևակայության թևերով կտանեն մի զարմանահրաշ աշխարհ, որտեղ միշտ հաղթում են բարին ու գեղեցիկը: Նրանք հասան իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 96 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-508-3

900դր




**Մանկական գրականություն**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 80 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-501-4

900դր

Հղում

# Ընտիր հեքիաթների շարք / Խելացի հեքիաթներ

*Կազմող՝ Նազելի Կարապետյան*

Ժողովածուի մեջ ներառված են խելացի հեքիաթներ՝ ընտրված աշխարհի ժողովուրդների հեքիաթների շտեմարանից: Դրանք զարգացնում են երեխայի երևակայությունն ու մտածողությունը, նպաստում ինտելեկտուալ որակների ձևավորմանը:




**Մանկական գրականություն**

Հայերեն
2015 թ., 16.5 x 24 սմ, 244 էջ

**Փափուկ կազմ**
ISBN 978-9939-52-037-7

3000դր

Հղում

# Չիկարելիի արկածները

*Ռուբեն Մարուխյան*

Մանկական վիպակ 0-ից մինչև 100 տարեկան երեխաների համար:

Հեղինակը սովորեցնում է, որ չի կարելի սուտ խոսել, շատ ուտել, նախանձել ընկերոջը, բարեկամին, բամբասել, խարդախությամբ և խաբեբայությամբ զբաղվել, մի խոսքով՝ անազնիվ չի կարելի լինել:

Չի կարելի նաև պարսատիկով թռչուններին ու կենդանիներին հալածել, ծառ կտրել, ծաղիկներ պոկոտել, աղբյուրի ակունքը կեղտոտել...

Եվ, իսկապես, ինչքա՜ն բան կա մեր կյանքում, որ չի կարելի անել, իսկ եթե արդեն արել ես այդ արարքներից մեկը, ապա անպայման դու, որպես մարդ, այնքան կփոքրանաս, որ քեզ այլևս ոչ ոք չի նկատի, և ընդհանրապես կկորչես, ինչպես այս գրքի Մուշեղ անունով տղան, որին փրկելու համար երկար ու դժվար ճանապարհ պետք է անցնել:




**Մանկական գրականություն**

Ռուսերեն
2008 թ., 16.5 x 24 սմ, 232 էջ

Կոշտ կազմ

ISBN 978-9939-52-037-7

3250դր

Հղում

# Չիկարելիի նոր արկածները (ռուսերեն)

*Ռուբեն Մարուխյան*

Մանկական վիպակ 0-ից մինչև 100 տարեկան երեխաների համար:

Հեղինակը սովորեցնում է, որ չի կարելի սուտ խոսել, շատ ուտել, նախանձել ընկերոջը, բարեկամին, բամբասել, խարդախությամբ և խաբեբայությամբ զբաղվել, մի խոսքով՝ անազնիվ չի կարելի լինել:

Չի կարելի նաև պարսատիկով թռչուններին ու կենդանիներին հալածել, ծառ կտրել, ծաղիկներ պոկոտել, աղբյուրի ակունքը կեղտոտել...

Եվ, իսկապես, ինչքա՛ն բան կա մեր կյանքում, որ չի կարելի անել, իսկ եթե արդեն արել ես այդ արաքներից մեկը, ապա անպայման դու, որպես մարդ, այնքան կփոքրանաս, որ քեզ այլևս ոչ ոք չի նկատի, և ընդհանրապես կկորչես, ինչպես այս գրքի Մուշեղ անունով տղան, որին փրկելու համար երկար ու դժվար ճանապարհ պետք է անցնել:




# Հայ ժողովրդական հեքիաթներ [1]

*կազմեց Նազելի Կարապետյանը*

«Հայ ժողովրդական հեքիաթներ» եռահատոր ժողովածուն ընդգրկում է «Հայ ժողովրդական հեքիաթների» մոտ 20 հատորներից՝ ավելի քան 2000 հեքիաթներից *ընտրված հեքիաթներ*:
Լայն հասարակությանն ավելի մատչելի դարձնելու համար դրանք տարբեր բարբառներից փոխադրվել են գրական հայերենի՝ որոշ չափով պահպանելով ժողովրդական բառուբանը և հավատարիմ մնալով բնագրին:

Հայ ժողովրդական հեքիաթները իրենց մեջ խտացնում են հայ ժողովրդի՝ հազարամյակների ընթացքում կուտակած իմաստությունը, կենսափիլիսոփայությունը, տիեզերքի մասին հնագույն պատկերացումները, հումորը, սովորույթները:Պարունակում են պատմական, ազգագրական արժեքավոր նյութ, որը կարող է ընթերցողի համար յուրօրինակ բացահայտումների առիթ դառնալ:
Այս հեքիաթները գալիս են հազարամյակների խորքից, սակայն իրենց մեջ կրող ճշմարտությունները միշտ արդիական են ու անփոփոխ:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2019 թ., 17 x 24.5 սմ, 240 էջ

Կոշտ կազմ

ISBN 978-9939-75-311-9 4200դր

Հղում



Մանկական գրականություն

Հայերեն
2010 թ., 16,5 x 24 սմ, 8, 12, 16 էջ

Փափուկ կազմ 4 750

# Թումանյանի 16 հեքիաթների հավաքածու

## + ձայնասկավառակ

*Հովհաննես Թումանյան*

Հավաքածուի մեջ ընդգրկված են Հովհաննես Թումանյանի ամենասիրված հեքիաթները և ձայնասկավառակ՝ Աիդա Ասատուրյանի ընթերցմամբ: Տասնվեց հեքիաթները ներկայացված են առանձին պատկերազարդ գրքույկներով, որոնցից տասը պարունակում են նաև ներկելու համար նախատեսված ներդիրներ: Այս ամենը զետեղված է գեղեցիկ և կոմպակտ տուփի մեջ: Սա հիանալի նվեր է յուրաքանչյուր երեխայի համար:

Հղում




# Ղազարոս Աղայան
# Հեքիաթներ

Ներկայացված նկարազարդ ժողովածուում ընդգրկված են հայ մեծանուն գրող, հեքիաթագիր Ղազարոս Աղայանի սիրված հեքիաթներից չորսը:

Գիրքը ինտերակտիվ է. կազմի վրա տեղադրված նկարհղումով հեռախոսի կամ գրասալիկի (պլանշետ) միջոցով հնարավոր է ունկնդրել հեքիաթները:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2018 թ., 21 x 21 սմ, 60 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-232-7

2900դր

Հղում




# *Խնկո Ապեր*
# Առակներ + աուդիո

Գրքում ներկայացված են սիրված հայ մանկագիր Խնկո Ապոր հեքիաթներն ու առակները, որոնք կհետաքրքրեն տարբեր տարիքի և տարբեր նախասիրություններ ունեցող ընթերցողների:

Գիրքը ինտերակտիվ է. կազմի վրա տեղադրված նկար-հղումով հեռախոսի կամ գրասալիկի (պլանշետ) միջոցով հնարավոր է ունկնդրել հեքիաթներ ու առակները:

**Մանկական գրականություն**

Հայերեն
2018 թ., 21 x 21 սմ, 48 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-297-6

2900դր

Հղում




**Մանկական գրականություն**

# Արև՛, արև՛, ե՛կ, ե՛կ

## *կազմեց Վ. Եղիազարյանը*

Հայ լավագույն մանկագիրների բանաստեղծությունների պատկերազարդ հավաքածու:

Գիրքը հրատարակվել է հայ գրատպության 500-ամյակի և 2012-ին «Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք» հռչակվելու առթիվ: Ժողովված են շուրջ 60 դասական և ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ՝ թեմատիկ-բովանդակային սկզբունքով: Ժողովածուի կազմողները հաշվի են առել երեխաների տարիքային, մտածողության և հոգեբանության բնորոշ առանձնահատկություններն ու հետաքրքրությունները:

Հայերեն
2012 թ., 21 x 30 սմ, 160 էջ

Կոշտ կազմ

ISBN 978-9939-52-525-9

2500դր

Հղում



Մանկական գրականություն

Հայերեն
2012 թ., 14.5 x 20 սմ, 272 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-52-498-6

1950դր

Հղում

# Մանկական գանձարան

*կազմեց Սուրեն Մուրադյանը*

«Մանկական գանձարանը» ամփոփում է Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի, Հ. Թումանյանի բանաստեղծություններից մինչև ժամանակակից մանկագիրների լավագույն ստեղծագործությունները: Ժողովածուն ընթերցանության օժանդակ ձեռնարկ է ոչ միայն մանուկների, պատանիների, այլև մանկապարտեզի դաստիարակների, մանկավարժների, ուսումնական հաստատություններում մանկական գրականություն դասավանդողների, նաև ծնողների, ընթերցողների ամենալայն շրջանակների համար: Խորհրդանշական է, որ ժողովածուն լույս է տեսնում ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք կոչվելու տարում:




Մանկական գրականություն

Հայերեն
2015 թ., 16.5 x 23.6 սմ, 144 էջ

Փափուկ կազմ

ISBN 99941-61-01-6

2500դր

Հղում

# Սասնա տուն
## Հայ ժողովրդական դյուցազնավեպ
*Վերապատմեցին Ա. Քյուրքչյանը, Լ. Տեր Գրիգորյանը*

Վերահրատարակվել է «Սասնա տուն» գիրքը: Հայ ժողովրդական դյուցազնավեպի Մկրտիչ Խերանյանի պատումը համառոտ վերապատմում են Անժել Քյուրքչյանը և Լիլիթ Տեր-Գրիգորյանը: Գիրքը հաստատել է ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտը:



**Մանկական**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ,
32,32,32,32 էջ

**Փափուկ կազմ**
ISBN 978-9939-52-983-7
978-9939-52-982-0
978-9939-75-023-1
978-9939-75-022-4

Հղում

# Կարդա և գունավորիր 1-4 Թե ինչու... Հեքիաթներ

*Ճուղուր Երևանցի*

«Թե ինչու» չորս գրքույկներում ընդգրկված են հետաքրքրաշարժ և ուսուցողական հեքիաթներ:
1-ին գրքույկի հեքիաթների հերոսները բացառապես կենդանիներ են, որոնք ընկնում են բարդ իրավիճակների մեջ, բայց հեքիաթներին համահունչ՝ ի վերջո ցանկալի ելքեր են ունենում:

2-րդ գրքույկի հեքիաթների հերոսները բացառապես պտուղներ են, որոնք ամենուր հանդիպում են մեր կյանքում, և որոնցով մենք հաճույքով սնվում ենք: Բայց երևի թե մեզնից քչերին է հետաքրքրել, թե ինչու է ձմերուկը դրսից կանաչ, իսկ ներսից կարմիր, կամ թե ինչո է դեղձի կեղևը փշոտ, իսկ կիտրոնը այդքան թթվաշ:
3-րդ գրքույկում ընդգրկված են հեքիաթներ բնության երևույթների մասին: Դուք կիմանաք, թե ինչու է ծիածանը գունավոր, ինչու է կրակը ջրից վախենում, լուսինը ամեն օր ձևափոխվում, կայծակը ամպերից բողոքում, քամին կրակի հետ խաղում և այլն, և այլն…

4-րդ գրքույկում հեքիաթներ են անտառի, նաև անտառի բնակիչների մասին, որոնք շատ հետաքրքիր կյանք են վարում:



# Կարդա և գունավորիր 5-8
# Թե ինչու... Հեքիաթներ

### *Ճուղուր Երևանցի*

«Թե ինչու» չորս գրքույկներում ընդգրկված են հետաքրքրաշարժ և ուսուցողական հեքիաթներ:

5-րդ և 6-րդ գրքույկներում բացահայտենք միջատների կյանքի հեքիաթային գաղտնիքները: Երևի դեռ մանուկ հասակից ձեզ հետաքրքրել է, թե ինչո՞ւ են մրջյուններն ապրում հողի տակ և օրնիբուն աշխատում, կամ թե ինչո՞ւ են մեղուները խայթում, երբ մոտենում ենք իրենց փեթակներին: Եվ ընդհանրապես, միգուցե դուք արդեն ցանկանո՞ւմ եք լսել զարմանահրաշ միջատների մասին հետաքրքիր պատմություններ:

7-րդ գրքույկը կրծողների մասին է: Դուք կբացահայտեք մի շարք հետաքրքիր փաստեր, թե ինչո՞ւ են առնետներն ամաչում մարդկանցից, կամ թե ինչո՞ւ են կուղբերը օրն ի բուն ջրերում շինարարություն անում, թե ինչո՞ւ են սկյուռներն ապրում ծառերի վրա և այլն:

8-րդ գրքույկի հեքիաթները կարդալով՝ դուք կիմանաք, թե ինչո՞ւ առյուծին ընտրեցին գազանների արքա, կամ թե ինչու վագրի մորթին դարձավ շերտավոր, դուք շատ բան կիմանաք ընտանի և բնության մեջ ապրող վայրի կատվազգիների մասին:

**Մանկական**

Հայերեն
2018 թ., 16.5 x 24 սմ,
32,32,32,32 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-245-7
978-9939-75-246-4
978-9939-75-247-1
978-9939-75-248-8

Հղում

# Պատանեկան գրականություն






**Գեղարվեստական**

Հայերեն
2015 թ., 14.5 x 20 սմ, 304 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-52-973-8
3900դր

Կոշտ կազմ
ISBN 978-9939-52-973-8
4800դր

Հղում

# Աստղերն են մեղավոր

*Ջոն Գրին*

*թարգմանեց Ալինա Միրզոյանը*

Չնայած ուռուցքները փոքրացնող բժշկական հրաշքին, որը Հեյզելին ապրելու ևս մի քանի տարի է պարգևել, նա, միևնույնն է, անբուժելի հիվանդ է՝ քաղցկեղի վերջին փուլում, ում կյանքի վերջին գլուխը գրվել է հենց ախտորոշման պահից: Սակայն, երբ Օգուստս Ուոթերս անունով շրջադարձային պայծառ կերպարը հանկարծակի հայտնվում է «Քաղցկեղով հիվանդ երեխաների աջակցության խմբակում», Հեյզելի համար կյանքի նոր էջ է բացվում:

*ԽՈՐԱԹԱՓԱՆՑ, ՀԱՄԱՐՁԱԿ, ՀԱՆԴՈՒԳՆ և ՍՈՒՐ*

«Աստղերն են մեղավոր» գիրքը մրցանակակիր գրող Ջոն Գրինի դեռևս ամենահավակնոտ և սրտաճմլիկ ստեղծագործությունն է, որ փառահեղ կերպով ուսումնասիրում է ողջ և սիրահարված լինելու զվարճալի, հուզիչ և ողբերգական գործընթացը:




**Գեղարվեստական**

Հայերեն
2017 թ., 14.5 x 20 սմ, 376 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-153-5
3900դր

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-153-5
4800դր

Հղում

# Թղթե քաղաքներ

## *Ջոն Գրին*

### *թարգմանեց Ալինա Միրզոյանը*

Քվենթին Ջեյքոբսենը ամբողջ կյանքում հեռվից սիրել է սքանչելի, արկածասեր Մարգո Ռոթ Սպիգլմենին: Ու երբ աղջիկը, նինջայի հագուստով, բացում է նրա պատուհանը ու հետո մագլցում նրա կյանք՝ հրավիրելով մի հետաքրքիր ու արտասովոր վրեժի արշավի, նա համաձայնում է:

Արթուն գիշերվան հաջորդում է նոր օրը, և Քյուն գնում է դպրոց ու հայտնաբերում, որ մշտապես հանելուկ Մարգոն հիմա արդեն առեղծված է դարձել: Բայց Քյուն շուտով պարզում է, որ նա հուշումներ է թողել... հենց իր՝ Քյուի համար: Առաջնորդվելով կցկտուր ուղենիշներով՝ որքան մոտենում, այնքան ավելի է հեռանում աղջկանից, որին կարծում էր, թե ճանաչում է:

#1 բեսթսելլերների հեղինակ և «Փրինց» մրցանակակիր Ջոն Գրինի փայլուն ու սուր միտքը, այրող, հուզական անկեղծությունը ծնունդ են տվել ընթերցողների մի նոր սերնդի:




**Գեղարվեստական**

Հայերեն
2018 թ., 14.5 x 20 սմ, 260 էջ

**Փափուկ կազմ**
ISBN 978-9939-75-282-2
4800դր

**Կոշտ կազմ**
ISBN 978-9939-75-282-2
3900դր

Հղում

# Անվերջ կրիաներ

## *Ջոն Գրին*

### *թարգմանեց Լիա Ասատրյանը*

16-ամյա Ազան երբևէ չէր հետամտել քննելու անհայտ կորած միլիարդատեր Ռասել Փիքեթի առեղծվածը, սակայն հարյուր հազար դոլարը գայթակղիչ է, իսկ նրա լավագույն և ամենաանվախ ընկերուհին՝ Դեյզին, ցանկանում է անպայման այդ հետաքննությունն անել: Այսպիսով, երկուսով դուրս են գալիս Ռասել Փիքեթի որդու՝ Դեյվիսի հետքի վրա: Ազան փորձում է լինել լավ դուստր, լավ ընկեր, լավ ուսանող և գուցե անգամ լավ դետեկտիվ՝ այդ ընթացքում պարփակված լինելով իր սեփական մտքերի, հոգեբանական խնդիրների սեղմող հորձանուտում:

«Ալյասկայի որոնումներում» և «Աստղերն են մեղավոր» գրքերի հեղինակ, մրցանակակիր գրող Ջոն Գրինը այժմ կիսվում է Ազայի պատմությամբ, որը սիրո, դիմացկունության և հարատև ընկերության ուժի մասին մի հիասքանչ նովել է:




# Ալյասկայի որոնումներում

***Ջոն Գրին***

***թարգմանեց Աննա Դանիելյանը***

Ջոն Գրինի այս ստեղծագործությունը բազմաթիվ մրցանակների արժանացած դեբյուտ է, որը հիանալիորեն նկարագրում է այն սքանչելի ու ցավոտ երջանկությունը, որ բխում է կյանքից ու սիրուց: Այս սուր, զավեշտալի ու սրտաճմլիկ վեպը հավերժ կմնա ձեզ հետ:

Տասնվեցամյա Մայլս Հոլթերը հետաքրքրվում է հայտնի մարդկանց վերջին խոսքերով: Հետևելով ֆրանսիացի գրող Ֆրանսուա Ռաբլեի՝ մահվանից առաջ հնչեցրած արտահայտությանը՝ նա թողնում է ծնողների հետ իր ձանձրալի կյանքն ու «Մեծ եթե»-ի որոնումներում ուղևորվում Քալվեր Քրիք դպրոց: Այստեղ նա գտնում է իր առաջին ընկերներին ու սիրահարվում Ալյասկա անունով մի աղջկա, որը տակնուվրա է անում տղայի կյանքը, իսկ հետո՝ անհետանում: Ողբերգական իրադարձությունները ստիպում են Մայլսին խորասուզվել կյանքի ու մահվան մասին մտորումներում:

**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2019 թ., 14,5 x 20 սմ, 280 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-424-6

3900դր

Հղում




**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2020 թ., 14,5 x 20 սմ, 400 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-495-6

4400դր

Հղում

# Աննան Կանաչ կտուրներից

*Լուսի Մոդ Մոնտգոմերի*

*թարգմանեց Աննա Դանիելյանը*

«Աննան Կանաչ կտուրներից» վեպը, 1908 թվականի առաջին հրատարակությունից ի վեր, դարձել է համաշխարհային բեսթսելեր: Վեպը վաճառվել է ավելի քան 50 միլիոն օրինակով և թարգմանվել 36 լեզուներով: Կանադուհի Լուսի Մոդ Մոնտգոմերիի այս ստեղծագործությունը բազմիցս էկրանավորվել է, այդ թվում՝ PBS, The Disney Channel և Netflix ընկերությունների կողմից:

Այն պատմում է մի որբ աղջնակի՝ Աննա Շիրլիի մասին: Մեթյու և Մարիլա Քաթբերտները՝ միջին տարիքի քույր և եղբայր, որոշում են տղա որդեգրել, ով կօգներ Էվոնլի մտացածին գյուղում գտնվող իրենց ագարակի աշխատանքները վարելիս, սակայն տեղի է ունենում սխալմունք, ու նրանց մոտ են ուղարկում կարմրահեր, խելացի ու երազկոտ Աննա Շիրլիին: Վեպում ներկայացված են Աննայի արկածները Կանաչ կտուրներում, որտեղ աղջիկը վերջապես գտնում է իր տունը:




**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2018 թ., 14.5 x 20 սմ, 304 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-9195-2-2

3300դր

# Շերլոք Հոլմս {3}

## Հոլմսի հուշագրությունները

*Սըր Արթուր Քոնան Դոյլ*

«Հոլմսի հուշագրությունները» ժողովածուն ներառում է սըր Արթուր Քոնան Դոյլի՝ խուզարկու Շերլոք Հոլմսի մասին պատմող պատմվածքները. առաջին անգամ տպագրվել է 1893թ.: Քոնան Դոյլը նախատեսել էր, որ այն պետք է Հոլմսի մասին պատմվածքների վերջին ժողովածուն լինի, այդ իսկ պատճառով եզրափակող «Վերջին գործը» ստեղծագործության մեջ Հոլմսը մահանում է՝ իր գլխավոր հակառակորդ պրոֆեսոր Մորիարտիի հետ ունեցած կռվի արդյունքում ժայռից ցած ընկնելով: Սակայն պատմվածքներն իրենց շարունակությունն են ունենում հաջորդ հատորներում:

Հղում




# Շերլոք Հոլմս {4}

## Շերլոք Հոլմսի վերադարձը

*Սըր Արթուր Քոնան Դոյլ*

«Շերլոք Հոլմսի վերադարձը» սըր Արթուր Քոնան Դոյլի ժողովածուներից է՝ բաղկացած տասներեք պատմվածքներից: Գիրքն առաջին անգամ տպագրվել է 1905 թվականին: «Վերջին գործը» պատմվածքում իր ենթադրյալ մահից հետո լեգենդար խուզարկուն հաղթական վերադարձ է ունենում այս գրքի առաջին գործում: Ժողովածուի մյուս հրաշալի և առեղծվածային պատմությունների շարքում Հոլմսը գաղտնազերծում է պարող մարդուկների ծածկագիրը, ինչպես նաև հետաքննում «Վեց Նապոլեոնների» գործը:

**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2018 թ., 14.5 x 20 սմ, 384 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-9195-5-3

3300դր

Հղում




**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2018 թ., 14.5 x 20 սմ, 376 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-9195-4-6

3300դր

Հղում

# Շերլոք Հոլմս {5}

## Բասքերվիլների շունը / Սարսափի հովիտը

*Սըր Արթուր Քոնան Դոյլ*

Շերլոք Հոլմսի ամենահայտնի արկածներից մեկի մասին պատմող «Բասքերվիլների շունը» ստեղծագործությունը առաջին անգամ լույս է տեսել 1902 թվականին: Իրադարձությունները կատարվում են Դարթմուրում՝ Դևոնշիրի կոմսությունում: Հոլմսին հանձնարարված է բացահայտել սըր Չարլզի սպանությունը՝ հիմնված դիվային շան մասին անցյալի սարսափելի պատմությունների վրա:

«Սարսափի հովիտը», որն առաջին անգամ լույս է տեսել 1915 թվականին, ներկայացնում է Հոլմսի փորձերը՝ կանխելու պրոֆեսոր Մորիարտիի գործակալներին սպանություն գործելուց: Թվում է՝ Հոլմսն ու Ուոթսոնը չափազանց ուշ են դեպքի վայր հասել, ու ամեն ինչ ավարտված է, բայց պատմությունն ամբողջովին բացահայտելու համար Հոլմսը պետք է դեպի անցյալ գնա ու բացահայտի սպանության իրական դրդապատճառներն ու մութ կողմերը:

# Շերլոք Հոլմս {6}

## Հրաժեշտի խոնարհումը / Հոլմսի արխիվը

*Սըր Արթուր Քոնան Դոյլ*




**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2018 թ., 14.5 x 20 սմ, 576 էջ

**Փափուկ կազմ**
ISBN 978-9939-9195-1-5

3300դր

Հղում

«Հրաժեշտի խոնարհումը» ժողովածուն լույս է տեսել 1917 թ.-ին և ընդգրկում է ութ պատմվածքներ: Վերջին պատմվածքը կրում է ժողովածուի վերնագիրն ու պատմում է Հոլմսի վերջին գործի մասին՝ սերտորեն կապված Առաջին համաշխարհային պատերազմի հետ:

1927 թ.-ին հրատարակված և տասներկու պատմվածքից բաղկացած «Հոլմսի արխիվը» ժողովածուն վերջինն է հանրահայտ խուզարկուի արկածների մասին պատմող ժողովածուներից: Այս պատմվածքներում ընթերցողը հնարավորություն է ստանում լրիվ այլ՝ հոգեբանական տեսանկյունից բացահայտելու Հոլմսին. Վերջինս, բժիշկ Ուոթսոնի խոսքերով, ոչ միայն հզոր ուղեղ, այլ նաև հզոր սիրտ ունի:




# Կորուսյալ աշխարհ

*Սըր Արթուր Քոնան Դոյլ*

1912թ. լույս տեսած «Կորուսյալ աշխարհ» գիտաֆանտաստիկ վեպը պրոֆեսոր Չելենջերի արկածների մասին պատմող մի քանի գրքերից առաջինն է:

Իրադարձությունները տեղի են ունենում Հարավային Ամերիկայում՝ Ամազոնի խորհրդավոր ջունգլիներում, որոնք իրենց մեջ թաքցնում են մի անհայտ ու զարմանահրաշ աշխարհ: Արշավախմբի անհավանական արկածները համեմված են կոլորիտային կերպարներով և անգլիական նուրբ ու հեգնական հումորով:

**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2018 թ., 14.5 x 20 սմ, 256 էջ

**Փափուկ կազմ**
ISBN 978-9939-9195-6-0

3900դր

Հղում




**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2019 թ., 15 x 21 սմ, 736 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-361-4

5000դր

Հղում

# Երեք հրացանակիրներ

*Ալեքսանդր Դյումա*

Ալեքսանդր Դյումա հոր՝ 1844 թ. լույս տեսած պատմաարկածային այս վեպը, որի գործողությունները տեղի են ունենում 17-րդ դարում, պատմում է երիտասարդ դ՚Արտանյանի արկածների մասին: Վերջինը թողել է իր տունն ու եկել Փարիզ՝ հրացանակիր դառնալու նպատակով: Այստեղ նա հանդիպում է երեք անբաժան հրացանակիր ընկերների՝ Աթոսին, Պորտոսին ու Արամիսին:

Չորս այնպիսի մարդիկ, ինչպիսին նրանք էին, չորս մարդիկ, որոնք պատրաստ էին միմյանց համար զոհաբերելու ամեն ինչ՝ սկսած քսակից մինչև կյանքը, որոնք միշտ աջակցում էին միմյանց ու երբեք չէին նահանջում, միասին կամ զատ-զատ կատարում էին միասնաբար ընդունած ամեն մի որոշում, չորս բռունցք, որոնք միասին կամ զատ-զատ սպառնում էին ամեն մի թշնամու, անխուսափելիորեն պետք է բացարձակորեն կամ գաղտնաբար, ուղիղ կամ զարտուղի ճանապարհով, խորամանկությամբ, թե ուժով ճանապարհ բաց անեին իրենց համար դեպի նշված նպատակը, որքան էլ հեռու լիներ այն կամ որքան էլ ամուր պաշտպանված լիներ:




# Ռոմեո եւ Ջուլիետ

*Ուիլյամ Շեքսպիր*

Ուիլյամ Շեքսպիրի գլուխգործոցներից մեկը՝ «Ռոմեո եւ Ջուլիետ» ողբերգությունը, ընդգրկված է հանրակրթական դպրոցի եւ բուհերի ուսումնական եւ ուսումնաօժանդակ ծրագրերում: Գիրքը նախատեսված է ընթերցողական լայն շրջանակների համար:

**Գեղարվեստական**

Հայերեն
2019 թ.,   15 x 21 սմ,   140 էջ

**Փափուկ կազմ**
ISBN    978-9939-75-120-7

2000դր

Հղում




# Մոբի Դիք

*Հերման Մելվիլ*

*բնագրից վերապատմեց Կարեն Սիմոնյանը*

Ամերիկացի դասական Հերման Մելվիլի «Մոբի Դիք կամ Ճերմակ կետաձուկը» վեպը պատմում է այն մենամարտի մասին, որ մարդկային բնավորությունն ու կամքը մղում են ճշմարտության ու արդարության որոնումներին խանգարող ռոմանտիկական խորհրդանիշով մարմնավորված չար ուժերի դեմ:

**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2018 թ., 15 x 21 սմ, 404 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-268-6

4990դր

Հղում




Գեղարվեստական / արձակ

Հայերեն
2019 թ., 14,5 x 20 սմ, 464 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-387-4

3900դր

Հղում

# 20.000 լյո ջրի տակ

*Ժյուլ Վեռն*

Ֆրանսիացի գրող Ժյուլ Վեռնի գիտաֆանտաստիկ այս վեպը պատմություն է պրոֆեսոր Արոնաքսի ու նրա ընկերների մասին, որոնք պատահաբար հայտնվում են «Նաուտիլուս» սուզանավում, որը ղեկավարում էր առեղծվածային կապիտան Նեմոն: Այս սուզանավով նրանք շուրջերկրյա ճանապարհորդություն են կատարում, որի ընթացքում անցնում են բազմաթիվ վտանգների միջով և դառնում անհավանական արկածների մասնակից:

«20.000 լյո ջրի տակ» վեպը լույս է տեսել 150 տարի առաջ, սակայն մինչև օրս էլ գրավում է միլիոնավոր ընթերցողների՝ անսպասելի ու վտանգավոր արկածներով, ծովերի ու օվկիանոսների խորությունների գունագեղ աշխարհներով և հատկապես՝ կապիտան Նեմոյի խորհրդավոր կերպարով:

*Համաշխարհային գրականություն*

# Ջեկ Լոնդոն
## Սպիտակ ժանիք




**Գեղարվեստական**

Հայերեն
2017 թ., 15 x 21 սմ, 256 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-129-0
3500դր

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-129-0
2500դր

Հղում

«Սպիտակ ժանիք» վիպակն առաջին անգամ տպագրվել է «Աութինգ մեգեզին» հանդեսում՝ 1904 թվականի հունվար-նոյեմբեր ամիսներին, ապա հրատարակվել է Նյու Յորքում:

Իրադարձությունները տեղի են ունենում Ալյասկայում, ոս-կու տենդի ժամանակներում: Վիպակի հերոսը ընտելացված գայլն է, որին անվանում են Սպիտակ ժանիք՝ սպիտակափայլ ժանիքներ ունենալու համար: Պատմության հիմնական մասը կազմված է գայլի խոհերի, պատկերացումների եւ ընկալումների տեսանկյունով: Մյուս կողմից՝ ներկայացվում են հեռավոր հյուսիսում բնակվող դաժանացած մարդու վե-րաբերմունքն ու հարաբերությունները աշխարհը հասկանալ ցանկացող կենդանու հետ:




**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2020 թ., 14,5 x 20 սմ, 408 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-483-3

3900դր

Հղում

# Ծովագայլը

*Ջեք Լոնդոն*

*թարգմանեց Հ. Գասպարյանը*

Ջեք Լոնդոնի՝ 1904 թվականին տպագրված «Ծովագայլը» վեպը կարելի է համարել արտասահմանյան արկածային գրականության լավագույն ստեղծագործություններից: Դեպքերը տեղի են ունենում 1893թ. Խաղաղ օվկիանոսում:

Ճակատագրի բերումով որսագողությամբ զբաղվող առևտրային նավի վրա են հայտնվում տարբեր բնավորութ-յան և հակումների տեր մարդիկ, որոնց միջև խրթին հարաբերություններ են՝ կյանքի նկատմամբ տարբեր հայացքներ ունենալու պատճառով: Նրանք չեն կարող թաքնվել կամ փախչել այդտեղից, որտեղ ամեն վայրկյան կյանքի ու մահվան պայքար են մղում՝ մի կողմից բնության արհավիրքների, մյուս կողմից՝ մարդկային դաժան ու արատավոր երևույթների դեմ: Այս դժվարին պայմաններում է բացահայտվում յուրաքանչյուրի իրական դեմքը, իսկ կրքերի գերլարումը հասցնում է մեծ պոռթկումների:




# Կոմս Մոնտե-Քրիստո
## գիրք 1
*Ալեքսանդր Դյումա*

«Կոմս Մոնտե-Քրիստո» վեպն արկածային ժանրի լավագույն ստեղծագործություններից է՝ գրված 1844-1845 թթ.: Հեղինակը գրքի սյուժեն ու գլխավոր հերոսի անունը մտահղացել է Միջերկրական ծովով շրջագայելիս, երբ տեսել է Մոնտեքրիստո կղզին ու լսել այնտեղ թաքնված բազմաթիվ գանձերի մասին:

Դեռ վաղ տարիքից վտանգի դեմ պայքարելու սովոր Դանտեսը ոչ մի կերպ չի կարողանում պայքարել աշխարհում գոյություն ունեցող անարդարության դեմ ու «ընկերների» կազմակերպած դավադրության հետևանքով հայտնվում է Իֆ ամրոց-բանտում, որտեղից ելք կարող էր լինել միայն հրաշքի դեպքում:

Առաջին հայացքից թվում է, թե սա ավարտն է, ու կյանքը փակուղի է մտել: Բայց բանտում հայտնվելը ամբողջությամբ փոխում է Դանտեսի կյանքի ընթացքը, և ճակատագրական է դառնում հատկապես Աբբա Ֆարիայի հետ հանդիպումը...

**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2019 թ., 15 x 21 սմ, 781 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-343-0

Հղում




# Կոմս Մոնտե-Քրիստո

## գիրք 2

*Ալեքսանդր Դյումա*

«Կոմս Մոնտե-Քրիստո» վեպն արկածային ժանրի լավագույն ստեղծագործություններից է՝ գրված 1844-1845 թթ.: Հեղինակը գրքի սյուժեն ու գլխավոր հերոսի անունը մտահղացել է Միջերկրական ծովով շրջագայելիս, երբ տեսել է Մոնտեքրիստո կղզին ու լսել այնտեղ թաքնված բազմաթիվ գանձերի մասին:

Դեռ վաղ տարիքից վտանգի դեմ պայքարելու սովոր Դանտեսը ոչ մի կերպ չի կարողանում պայքարել աշխարհում գոյություն ունեցող անարդարության դեմ ու «ընկերների» կազմակերպած դավադրության հետևանքով հայտնվում է Իֆ ամրոց-բանտում, որտեղից ելք կարող էր լինել միայն հրաշքի դեպքում:

Առաջին հայացքից թվում է, թե սա ավարտն է, ու կյանքը փակուղի է մտել: Բայց բանտում հայտնվելը ամբողջությամբ փոխում է Դանտեսի կյանքի ընթացքը, և ճակատագրական է դառնում հատկապես Աբբա Ֆարիայի հետ հանդիպումը...

**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2019 թ., 15 x 21 սմ, 704 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-344-7

Հղում

# Թարգմանական գրականություն




**Գեղարվեստական**

Հայերեն
2018 թ., 15 x 21 սմ, 572 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-211-2

5900դր

Հղում

# Հաղթական կամար

*Էրիխ Մարիա Ռեմարկ*
*թարգմանեց Վանուհի Բաղմանյանը*

«Հաղթական կամարը» գերմանացի գրող Էրիխ Մարիա Ռեմարկի աշխարհահռչակ վեպերից է: Այն Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի դասական գործերից է, որն առաջին անգամ տպագրվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում 1945 թվականին:

1939 թվականն է: Չնայած գերմանացի բժիշկ և Փարիզում ապրող գաղթական Ռավիկին օրենքով արգելված է վիրաբուժությամբ զբաղվել, նա երկու տարի շարունակ բուժում է քաղաքի ամենահեղինակավոր քաղաքացիներին երկու ոչ այնքան հմուտ ֆրանսիացի բժիշկների օգնությամբ:

Նա շարունակ հետապնդվում է նացիստների կողմից և սիրո հնարավորության ոչ մի հույս անգամ չունի, սակայն կյանքը զարմանալի շրջադարձներ ունի ռոմանտիկների համար անգամ ամենից անբարենպաստ ժամանակներում:




Գեղարվեստական

Հայերեն
2018 թ., 15 x 21 սմ, 504 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-180-1

5500դր

Հղում

# Երեք ընկեր

*Էրիխ Մարիա Ռեմարկ*

*թարգմանեց Վանուհի Բաղմանյանը*

Էրիխ Մարիա Ռեմարկի «Երեք ընկեր» ստեղծագործությունը պատմություն է պատերազմի հետքերն իրենց վրա կրող երիտասարդների մասին:

Ռոբերտ Լոհքամփի, Օտտո Քյոսթերի և Գոթֆրիդ Լենցի ընկերությունը կոփվել է պատերազմի դաշտում: Կորցնելով շատ հարազատ մարդկանց, տեսնելով մահը, կյանքի համար պայքարը, ցավը, զգալով վախն իր գերագույն արտահայտությամբ՝ այս ընկերները ամուր կառչած են իրարից, նրանց հիշողությունները, տառապանքները և ճակատագրերը շատ նման են իրար:

Ռեմարկի «Երեք ընկեր» ստեղծագործությունը համաշխարհային գրականության գլուխգործոցներից մեկն է: Այն ամբողջովին կենսասիրության մղում է: Աչքի է ընկնում խորության բազմաշերտությամբ, որը սիրելի է դարձնում այս գիրքը յուրաքանչյուր ընթերցողի համար: Սա գրականության այն բացառիկ նմուշներից է, որը երբեք չի կարող ժամանակավրեպ դառնալ:




# Արևմտյան ճակատում նորություն չկա

*Էրիխ Մարիա Ռեմարկ*
*թարգմանեց Վանուհի Բաղմանյանը*

Գերմանացի աշխարհահռչակ գրող Էրիխ Մարիա Ռեմարկի «Արևմտյան ճակատում նորություն չկա» գիրքը լույս է տեսել 1929 թվականին: Այն պատերազմի մասին պատմող երբևէ ստեղծված ամենավաճառված գրքերից է, որը, ի դեպ, նացիստական Գերմանիայում արգելված գրականության ցանկում է եղել: Ստեղծագործության հերոսները գերմանացի զինվորներն են, գործողությունները ծավալվում են Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Գրքում ականատեսի սուր աչքով ներկայացված են պատերազմող զինվորների ապրումները, նրանց կյանքը, հոգեվիճակը, մտքերը:

**Գեղարվեստական**

Հայերեն
2018 թ., 15 x 21 սմ, 224 էջ
Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-255-6

4500դր

Հղում




**Գեղարվեստական**

Հայերեն
2019 թ., 15 x 21 սմ, 422 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-339-3

5000դր

Հղում

# Ապրելու ժամանակը և մեռնելու ժամանակը

*Էրիխ Մարիա Ռեմարկ*
*թարգմանեց Վանուհի Բաղմանյանը*

«Ապրելու ժամանակը և մեռնելու ժամանակը» վեպը գերմանացի հռչակավոր գրող Է. Մ. Ռեմարկի հանրահայտ հակառազմական գործերից է: Երկրորդ համաշխարհային պատերազմ: Գերմանական զորքը Ռուսաստանում: Շշուկներ նահանջի մասին: Պատերազմ՝ ճակատում, պատերազմ՝ տանը, պատերազմ՝ սրտերում և ուղեղներում, և ամենակարևորը՝ սեր, որ զինվորին տուն վերադարձնող խարիսխ պիտի լինի: Էռնստ Գրեբերի՝ գերմանացի զինվորի խոհերը պատերազմի անհեթեթության մասին հոգեբանական լուրջ մարտահրավեր են ժամանակի աբսուրդին, պատմության կրկնությանը:




**Գեղարվեստական / արձակ**

Հայերեն
2020 թ., 14,5 x 20 սմ, 336 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-481-9

4900դր

Հղում

# Երկինքն ընտրյալներ չունի

*Էրիխ Մարիա Ռեմարկ*
*թարգմանեց Վանուհի Բաղմանյանը*

Է. Մ. Ռեմարկի այս վեպն առաջին անգամ՝ 1959 թ., հատվածաբար լույս է տեսել համբուրգյան Kristall ամսագրում՝ Geborgtes Leben՝ «Կյանքը՝ պարտքով» վերնագրով: 1961 թ. լույս է տեսել որպես գիրք՝ «Երկինքն ընտրյալներ չունի» վերնագրով:

50-ական թթ. սկզբին արդեն տարեց ավտոմրցարշավորդ Քլեյֆեն առողջարանում այցելում է իր երբեմնի գործընկերոջը, որ արդեն երկար ժամանակ բուժվում էր թոքախտից: Այնտեղ նա ծանոթանում է ծանր հիվանդ Լիլիանին: Վերջինս, որ արդեն տարիներ շարունակ արհամարհանքով էր վերաբերվում առողջարանի միօրինակ կենցաղին, խիստ կարգուկանոնին ու ձանձրույթին, օգտագործում է առիթն ու փախչում Քլեյֆեի հետ: Միակ բանը, որ միավորում էր երկուսին, ապագա չունենալն էր: Փարիզում, Հռոմում և Մոնտե Կառլոյում նրանք ապրեցին իրենց բաժին ընկած կարճատև կյանքը:




# Սև կոթողը

*Էրիխ Մարիա Ռեմարկ*

*թարգմանեց Աննա Ռոստոմյանը*

«Սև կոթողը» գերմանացի գրող Էրիխ Մարիա Ռեմարկի վեպն է, գրվել է 1956 թվականին: Այն ներկայացնում է 1920-ական թվականների սկզբների Գերմանիան՝ Առաջին աշխարհամարտի հետևանքներով:

«Ղեբուբան կամ արքայի գործակալը» վեպը պատմում է Եդեսիայի առաջին քրիստոնյա արքա Աբգարի և Հայաստանում Արշակունյաց գահատոհմի հիմնադիր Տրդատ Ա-ի պատմական բուռն ժամանակաշրջանի մասին, թե ինչպես Հայոց աշխարհը կարողացավ անձնվեր հայրենասերների շնորհիվ անկախանալ Հռոմից:

Վեպն առանձնանում է հետաքրքիր, ուրույն պատումով, դեպքերի հետաքրքիր զարգացմամբ, ինչը կլանում է ընթերցողին: Պատմավեպի գլխավոր հերոսներից մեկը՝ Ղեբուբան, սովորական բուժակից աճում, դառնում է թա-գավորի գաղտնի գործակալության նախարար՝ մեծ ներդրում ունենալով երկրում դավադրությունների բացահայտման գործում:

**Գեղարվեստական**

Հայերեն
2014 թ., 14.5 x 20 սմ, 374 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-52-855-7

3250դր

Հղում




# Գրավաճառը

## *վիպակ, պատմածքներ*

### *Էդուարդ Խաչիկյան*

Էդուարդ Խաչիկյանի ժողովածուն ընդգրկում է հեղինակի վերջին շրջանի պատմվածքները և «Գրավաճառը» կիսաֆանտաստիկ-դետեկտիվ վիպակը, որն անդրադարձ է ենթադրյալ գալիքին և ապագայի կողմից առաջադրվող մարտահրավերներին:

Սյուժեն ընթերցվում է մեծ հետաքրքրությամբ: Հեղինակն իր մտահոգություններն է կիսում ընթերցողի հետ՝ արժևորելով գիրքը, որ մեր օրերում մղվել է հետին պլան՝ տեղը «զիջելով» ամենակուլ համացանցին:

**Գեղարվեստական**

Հայերեն
2017 թ., 14.5 x 20 սմ, 200 էջ

**Փափուկ կազմ**
ISBN 978-9939-75-177-1

2900դր

Հղում




# Արդի հայ պատմվածք Ընտրանի

*կազմեց Շանթ Մկրտչյանը*

Այս ընտրանին փորձ է՝ առաջին անգամ ամբողջականորեն ներկայացնելու արդի հայ պատմվածքի բազմազանությունը: Ինչպիսի՞ն է այն: Ի՞նչ գաղափարներ և խոհեր են արծածում մեր արձակագիրները: Իրականության գեղարվեստական արտացոլման ինչպիսի՞ մեթոդներ և ոճեր են դրսևորվում 21-րդ դարասկզբին:

**Գեղարվեստական: Արձակ**

Հայերեն
2011 թ., 14.5 x 20 սմ, 448 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-52-424-5

3250դր

Հղում



# Կենսագրականներ




**Կենսագրական / Բիզնես**

Հայերեն
2018 թ., 17 x 25 սմ, 440 էջ

Կոշտ կազմ

ISBN 978-0-06245677-9

7700դր

Հղում

# Խաղացողը

*Ուիլյամ Չ. Ռեմփել*

*թարգմանեցին Ալինա և Աննա Միրզոյանները*

*ԹԵ ԻՆՉՊԵՍ ԱՆՓՈՂ, ԹԵՐՈՒՍ ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԸ ԴԱՐՁԱՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾԱՐԱՐ*

*Ամերիկայի ֆինանսական աշխարհի ամենահարուստ և սակավաճանաչ հսկաներից մեկի՝ ամեն ինչ ինքնուրույն ծեռք բերած միլիարդատիրոջ՝ ցնցոտիներից մինչև հարուստ կյանքի հասնելու պատմությունը:*

Այս հափշտակող կենսագրականի մեջ, հետաքննիչ լրագրող Ուիլյամ Չ. Ռեմփելը, խորամուխ լինելով Քըրքորյանի՝ երկար ժամանակ գաղտնի պահված կյանքի պատմության մեջ, ներկայացնում է հակասություններով լի մի մարդու՝ թերի կրթությամբ, սակայն գործարքների հանճարեղ վարպետի, անչափ ամաչկոտ մի մարդու, որն ամենահամարձակ ու հանդուգն բիզնես նախաձեռնությունների հեղինակ էր, զգուշավոր և ամեն ինչ մանրամասն հաշվարկող ներդրողի, որը պատրաստ էր ամեն ինչ դնել խաղասեղանին: «Խաղացողը» լույս է սփռում ամեն ինչին ինքնուրույն հասած այս սակավաճանաչ ձեռնարկատիրոջ ոգեշնչող պատմության վրա:




**Կենսագրական**

Ռուսերեն
2019 թ., 16.5 x 24 սմ, 368 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-360-7

7700դր

Հղում

# Խաղացողը (ռուսերեն)

*Ուիլյամ Չ. Ռեմփել*

*Ամերիկայի ֆինանսական աշխարհի ամենահարուստ և սակավաճանաչ հսկաներից մեկի՝ ամեն ինչ ինքնուրույն ձեռք բերած միլիարդատիրոջ՝ ցնցոտիներից մինչև հարուստ կյանքի հասնելու պատմությունը:*

Քըրք Քըրքորյանը Ամերիկայի առաջամարտիկ օդաչուներից էր, կինոմագնատ, ռիսկի սիրահար և գործարար աշխարհի հսկաներից, որը, վերափոխելով Լաս Վեգասն ու Հոլիվուդը, դարձավ երկրի խոշոր ֆինանսիստներից մեկը: Նրա կյանքի պատմությունն արտացոլում է Առաջին աշխարհամարտի օդաչուի սառնասիրտ համարձակությունը, կռվարար բռնցքամարտիկի հաստատակամությունը, խորհրդավոր, անընթեռնելի խաղացողի խորամանկությունը և գործարքների անզուգական հանճարը:

Այս հափշտակող կենսագրականում հետաքննիչ լրագրող Ուիլյամ Չ. Ռեմփելը ներկայացնում է հակասություններով լի մի մարդու՝ թերի կրթությամբ, սակայն գործարքների հանճարեղ վարպետի, անչափ ամաչկոտ մի մարդու, որն ամենահամարձակ ու հանդուգն բիզնես նախաձեռնությունների հեղինակ էր, զգուշավոր և ամեն ինչ մանրամասն հաշվարկող ներդրողի, որը պատրաստ էր ամեն ինչ դնել խաղասեղանին:




# Պարոն Հինգ տոկոս (հայերեն)

*Ջոնաթան Քոնլին*

*Թարգմանեց Սիլվա Հովակիմյանը*

Երբ 1955 թ. 86 տարեկանում Գալուստ Գյուլբենկյանը մահացավ, նա աշխարհի ամենահարուստ մարդն էր: Հանդիսանալով Iraq Petroleum-ի բաժնեթղթերի 5 տոկոսի սեփականատեր՝ նա մեծ ճանաչում էր ձեռք բերել նավթային աշխարհում և ստացել «Պարոն 5 տոկոս» մականունը:

Ստամբուլի հայ մեծահարուստ վաճառականի որդին շուրջ կես դար նավթային գործարքներ էր կնքում ամենաբարձր մակարդակով՝ թաքցնելով իր բիզնես հետաքրքրությունների խորհրդավոր շրջանակն ու կապերը ասիական ու եվրոպական կարտելների լաբիրինթոսում: Ծանոթ լինելով նավթային աշխարհի բոլոր նրբություններին և ունենալով բազմաթիվ կապեր՝ հաճախ նա դառնում էր գերտերությունների միջև ծագած խնդիրները լուծող:

**Կենսագրական**

Հայերեն
2019 թ., 16.5 x 24 սմ, 432 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-431-4

7700դր

Հղում




**Կենսագրական**

Ռուսերեն
2019 թ., 16.5 x 24 սմ, 448 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-432-1

7700դր

Հղում

# Պարոն Հինգ տոկոս (ռուսերեն)

*Ջոնաթան Քոնլին*

*Թարգմանեց Նատալյա Ձալիբեկյանը*

Երբ 1955 թ. 86 տարեկանում Գալուստ Գյուլբենկյանը մահացավ, նա աշխարհի ամենահարուստ մարդն էր: Հանդիսանալով Iraq Petroleum-ի բաժնեթղթերի 5 տոկոսի սեփականատեր՝ նա մեծ ճանաչում էր ձեռք բերել նավթային աշխարհում և ստացել «Պարոն 5 տոկոս» մականունը:

Ստամբուլի հայ մեծահարուստ վաճառականի որդին շուրջ կես դար նավթային գործարքներ էր կնքում ամենաբարձր մակարդակով՝ թաքցնելով իր բիզնես հետաքրքրությունների խորհրդավոր շրջանակն ու կապերը ասիական ու եվրոպական կարտելների լաբիրինթոսում: Ծանոթ լինելով նավթային աշխարհի բոլոր նրբություններին և ունենալով բազմաթիվ կապեր՝ հաճախ նա դառնում էր գերտերությունների միջև ծագած խնդիրները լուծող:

Այս գիրքը բացահայտում է Գյուլբենկյանի բարդ ու բազմակի գոյությունը: Սա հրաշալի պատմություն է մի մարդու մասին, որ, ավելի, քան որևէ մեկը, օգնել է ձևավորել ժամանակակից նավթային արդյունաբերությունը:




**Կենսագրական**

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 368 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-487-1

7700դր

Հղում

# Կովկասի արքան (հայերեն)

*Արմեն Գասպարյան*

*Թարգմանեց Դավիթ Սամվելյանը*

Գիրքը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ամենահարուստ ու երջանիկ մարդկանցից մեկի՝ նավթային արքա, ֆինանսական մագնատ, մեծ ընտանիքի հայր, բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի կյանքի և գործունեության մասին է՝ ներկայացված իր ժամանակի և մարդկանց համատեքստում: Նա, անգնահատելի դեր ունենալով Ռուսական կայսրությունում նավթարդյունաբերության զարգացման գործում, աչքի է ընկել նաև հայանպաստ գործունեությամբ: Թեման ներկայացված է փաստավավերագրական և գեղարվեստական ժանրերի միահյուսմամբ, որն ավելի հետաքրքիր է դարձնում ընթերցանությունը:

Լինել «արքա» մի վայրում և մի ժամանակահատվածում, երբ ամենաբարձր տիտղոսը կայսրության փոխարքան է, թերևս անկարելի է: Բայց ոչ Մանթաշյանցի համար… Քանի որ նրա հաղթանակի գրավականը ոչ թե փողն էր կամ անձնական երջանկությունը, այլ այդ նույն փողը ազգին, ազգային վեհ գաղափարներին ու նպատակներին ծառայեցնելը:




**Կենսագրական**

Ռուսերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 376 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-475-8

7700դր

Գնում

# Կովկասի արքան (ռուսերեն)

*Արմեն Գասպարյան*

Գիրքը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ամենահարուստ ու երջանիկ մարդկանցից մեկի՝ նավթային արքա, ֆինանսական մագնատ, մեծ ընտանիքի հայր, բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի կյանքի և գործունեության մասին է՝ ներկայացված իր ժամանակի և մարդկանց համատեքստում: Նա, անգնահատելի դեր ունենալով Ռուսական կայսրությունում նավթարդյունաբերության զարգացման գործում, աչքի է ընկել նաև հայանպաստ գործունեությամբ: Թեման ներկայացված է փաստավավերագրական և գեղարվեստական ժանրերի միաձուլմամբ, որն ավելի հետաքրքիր է դարձնում ընթերցանությունը:

Լինել «արքա» մի վայրում և մի ժամանակահատվածում, երբ ամենաբարձր տիտղոսը կայսրության փոխարքան է, թերևս անկարելի է: Բայց ոչ Մանթաշյանցի համար… Քանի որ նրա հաղթանակի գրավականը ոչ թե փողն էր կամ անձնական երջանկությունը, այլ այդ նույն փողը ազգին, ազգային վեհ գաղափարներին ու նպատակներին ծառայեցնելը:




Կենսագրական

Հայերեն
2020 թ., 16.5 x 24 սմ, 160+16 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-540-3

4700դր

Հղում

# Արամյանց

*Կարեն Օհանջ*
*Թարգմանեց Դավիթ Սամվելյանը*

*Պատմություն բուրժուազիայի ճարտարապետ, բարեգործ-գործարար Միքայել Արամյանցի հաջողությունների և անձնական կյանքի ծախողումների մասին:*

«Արամյանց»-ը արժանահավատ գեղարվեստական պատում է հանճարեղ ձեռներեց ու բարեգործ Միքայել Արամյանցի կյանքի մասին: Հեղինակը մեզ ծանոթացնում է հայկական բիզնեսի ծագման, դրա զարգացման և գործարար ընտրախավերի փոխհարաբերությունների մշակույթին, և, իհարկե, բուրժուազիական բարեգործության նոր մշակույթի հետ, որը կարելի է սահմանել որպես հումանիզմի դրսևորում նրանց հանդեպ, ովքեր ունեն կարեկցանքի և օգնության կարիք:
«Արամյանց» վեպը նաև ռուսական կայսրության ամենահանճարեղ ձեռներեցներից մեկի, բարեգործի և հայ, թիֆլիսյան և Բաքվի մտավորականության հովանավոր մեծ մարդու դրաման է:




Հանրագիտակ

Հայերեն
2011 թ.,   21 x 28 սմ,   636 էջ

Կոշտ կազմ

ISBN     978-9939-52-248-7

8500դր

Հղում

# Նարեկացու հետ
## Հանրագիտակ
*կազմեց Յուրի Պետրոսյանը*

Շուրջ 11 դար Գրիգոր Նարեկացու մատյանը հմայում ու գերում է սերունդներին, բուժում, կրթում ու դաստիարակում: Նարեկացու ստեղծագործությանն անդրադարձել են տարբեր ոլորտների աշխարհի բազմաթիվ մասնագետներ՝ գիտնականներ, արվեստաբաններ, ուսումնասիրողներ, գրողներ, տպագրիչներ և այլն:

Սույն ժողովածուն ամփոփել է Նարեկացուն նվիրված ծովածավալ գրականության շատ փոքր մասը, որը հիմնականում արտահայտված է նրա ստեղծագործություններով, Նարեկացուն նվիրված շուրջ 150 հոդվածով ու նյութերով, մոտ 600 լուսանկարներով, մանրանկարներով, պատկեր-խոյակներով, Նարեկացուն նվիրված ստեղծագործություններով և այլն: Հանրագիտակը նվիրված է հայ տպագրության 500-ամյակին:




# Թումանյանը ժամանակակիցների հուշերում

*կազմեց Լ. Մ. Կարապետյանը*

**Կենսագրական**

Հայերեն
2009 թ., 14.5 x 20 սմ, 1004 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-52-152-7

5200դր

Հղում

Գիրքն առաջին անգամ հրատարակվել է Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակի առթիվ (ՀԽՍԽ ԳԱ հրատարակչություն, 1969): «Թումանյանը ժամանակիցների հուշերում» հուշագրության գաղափարը ծնվել է 1935-ին՝ բանաստեղծի «Երկերի լիակատար ժողովածուի» նախապատրաստական աշխատանքերն սկսելիս: Սակայն 30-ական թթ. ժողովածուի տպագրությունն ընդհատվել է: 1966-ին Թումանյանի ծննդյան 100-ամյակի միջոցառումների ծրագրում ներառել են նաև այս աշխատության հրատարակությունը, Նվարդ Թումանյանի հավաքած հուշերին ավելացվել են հետագա տարիներին գրված և մասամբ մամուլում հրապարակվածները:




# Կանայք Հովհաննես Թումանյանի կյանքում

*Սուսաննա Հովհաննիսյան*

Գիրքը ներկայացնում է կնոջ դերի մասին թումանյանական ընկալումները պոետի գրական և գեղարվեստական ժառանգության մեջ: Առաջին անգամ արծարծվում է Թումանյանի և կյանքի տարբեր խաչմերուկներում նրան հանդիպած, նրանով հիացած, նրա ընկերակցությանն ու բարեկամությանը, սիրուն ու ջերմությանը, հաճախ եղբայրական ու հայրական հոգածությանն արժանացած՝ նրան շրջապատող հայ և այլազգի կանանց առնչակցությունը: Առանձնացվում են հատկապես բանաստեղծին ոգեշնչած մուսայաստեղծ կանանց, մասնավորապես՝ Վարյա Խանդամիրյանի և իշխանուհի Մարիամ Թումանյանի հետ մտերմության քնարական պատմությունները:

Աշխատությունն օգտակար է հոգեբանների, գրականության պատմաբանների և ընթերցողների լայն շրջանի համար:

Գեղարվեստական/ Կենսագրական

Հայերեն
2019 թ., 16,5 x 24 սմ, 208 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-75-334-8

4000դր

Հղում



# Բիզնես / մոտիվացիոն գրքեր




**Բիզնես / Հոգեբանություն / Մոտիվացիա**


Հայերեն
2018 թ., 15 x 21 սմ, 552 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-217-4 5500դր

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-217-4 6500դր


Հղում

# Ամենաարդյունավետ մարդկանց 7 սովորույթները

*Սթիվեն Քովի*

*թարգմանեց Ալինա Միրզոյանը*

«Ամենաարդյունավետ մարդկանց 7 սովորույթները» գրքում հեղինակ Սթիվեն Քովին ներկայացնում է ամբողջական, սկզբունքների վրա հիմնված մոտեցում անձնական և մասնագիտական խնդիրների լուծման համար:

«Ամենաարդյունավետ մարդկանց 7 սովորույթները» գիրքը 1990 թվականից շարունակում է մնալ մեր ժամանակի ամենակարևոր բիզնես գրքերից՝ ավելի քան 30 միլիոն վաճառված օրինակով: Գիրքը թռուցիկ կերպով կարդալու համար չէ. այն պետք է կարդալ ուսումնասիրելով և նշումներ անելով: Ընթերցանությունն ավարտելուց հետո կզգաք, որ մի հզոր սեմինար եք անցել Քովիի հետ:




**Բիզնես / Հոգեբանություն / Մոտիվացիա**

Հայերեն
2020 թ., 16,5 x 24 սմ, 448 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-55-40

6500դր

Հղում

# 8-րդ սովորույթը

*Սթիվեն Քովի*

*թարգմանեց Ալինա Միրզոյանը*

*«Ամենաարդյունավետ մարդկանց 7 սովորույթները» բեսթսելլերի հեղինակ Սթիվեն Ռ. Քովիի երկար սպասված նոր գիրքը*

«Ամենաարդյունավետ մարդկանց 7 սովորույթները» գրքի վրա աշխատելուց ի վեր նման կիրք, վստահություն ու հուզմունք ես չէի զգացել: Կարծում եմ՝ պատճառը, որ «8-րդ սովորույթում» տեղ գտած նոր գաղափարներն այդքան ուժեղ արձագանք ունեցան, այն է, որ մարդիկ դատարկության զգացում ունեն: Այս նույն դատարկությունը զգացվում է նաև ողջ աշխարհի կազմակերպություններում, որոնց մեծ մասը պայքարում է իր գերակա նպատակներին հասնելու համար: Մարդկանց մոտ չկա այն զգացողությունը, որ իրենց յուրահատուկ տաղանդները պահանջված են կամ գնահատված: Որպես արդյունք՝ թե մարդկանց, թե կազմակերպությունների մոտ առաջանում է բնական մղում՝ գտնելու իրենց ձայնը, ունենալու նշանակություն, անելու փոփոխություններ, հասնելու հզորության»:

Սթիվեն Ռ. Քովի




**Բիզնես / Մոտիվացիա**

Հայերեն
2020 թ., 14,5 x 20 սմ, 560 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-531-1

6500դր

Հղում

# 4-ժամյա աշխատաշաբաթ

*Թիմոթի Ֆերիս*

*թարգմանեց Ռայա Սարգսյանը*

Շքեղ ապրելակերպի հասնելու այս քայլ առ քայլ ուղեցույցը սովորեցնում է.

• Թե ինչպես Թիմը տարեկան 40 000 դոլար եկամուտն ու շաբաթական 80 ժամ աշխատաժամանակը հասցրեց ամսական 40 000 դոլարի և շաբաթը 4 ժամի.

• Ինչպես աութսորսի միջոցով օգտագործել 5 դոլար ժամավճարով արտասահմանյան վիրտուալ օգնականների ծառայությունները և անել այն, ինչ ուզում ես.

• Ինչպես են ճանաչում ձեռք բերած, կայացած արվեստագետները ճանապարհորդում աշխարհով մեկ՝ առանց իրենց աշխատանքը թողնելու.

• Ինչպես 48 ժամում կրճատել աշխատանքի 50%-ը՝ կիրառելով իտալացի մոռացված տնտեսագետի սկզբունքները.

• Ինչպես փոխարինել երկարաժամկետ կարիերան կարճ աշխատանքային պոռթկումներով և հաճախակի «կարճատև հանգստով»:




**Բիզնես / Մոտիվացիա**

Հայերեն
2020 թ., 14,5 x 20 սմ, 472 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-356-0

5500դր

Հղում

# Առաջնորդության 21 անվիճարկելի օրենքները

*Ջոն Ք. Մաքսվել*

*թարգմանեց Մարիա Սեմերջյանը*

Միջազգայնորեն ճանաչում ունեցող առաջնորդության փորձագետ, հրապարակախոս և հեղինակ Ջոն Ք. Մաքսվելը, որը ամեն տարի ելույթներ է ունենում «Ֆորչըն 500»-ի վարկանիշով խոշորագույն ընկերությունների, միջազգային, պետական առաջնորդների և բիզնեսի ամենահաջողակ ներկայացուցիչների համար, մեկտեղում է ավելի քան քառասուն տարվա առաջնորդության փորձն ու հմտությունները «Առաջնորդության 21 անվիճարկելի օրենքները» գրքում: Մաքսվելը բացահայտում է առաջնորդության 21 համընդհանուր ճշմարտությունները որպես օրենքներ, որոնք կարող են յուրաքանչյուրի ուղեկիցը դառնալ լավ առաջնորդ լինելու ճանապարհին: «Բիզնես ինսայդեր» ամսագիրը Մաքսվելին համարում է առաջնորդության ամենաազդեցիկ փորձագետն աշխարհում. դրա մասին վկայում է այն, որ նրա հիմնած կազմակերպություններն աշխարհով մեկ վերապատրաստել են ավելի քան 2 միլիոն առաջնորդ:




# 1-էջանոց մարքեթինգային պլան

*Ալան Դիբ*

*թարգմանեց Զարուհի Սողոմոնյանը*

«1-էջանոց մարքեթինգային պլան» գիրքն իսկական հեղաշրջում է, որը մարքեթինգային պլանի ստեղծումը դարձնում է պարզ և արագ: Տառացիորեն մեկ էջի շրջանակներում դուք կկարողանաք հեշտությամբ քարտեզագրել ձեր սեփական բարդ մարքեթինգային պլանը և գրոյից վերածվել մարքեթինգի հերոսի: Անկախ նրանից՝ սկսնակ եք, թե փորձառու ձեռներեց, «1-էջանոց մարքեթինգային պլանը» ձեր բիզնեսի աճը խթանող մարքեթինգային պլան ստեղծելու ամենահեշտ ու ամենաարագ ձևն է:

- Ներգրավեք նոր հաճախորդներ
- Վաստակեք էլ ավելի շատ
- Տարբերվեք բազմությունից

**Մարքեթինգ / Բիզնես**

Հայերեն
2019 թ., 15 x 21 սմ, 336 էջ

Կոշտ կազմ

ISBN 978-9939-75-356-0

5000դր

Հղում






**Հոգեբանություն, մեթոդական**

Հայերեն
2019 թ.,   13 x 20 սմ,   216 էջ

**Փափուկ կազմ**
ISBN     978-9939-75-381-2

5000դր

Հղում

# Երեքից հետո արդեն ուշ է

*Մասարու Իբուկա*

Այս զարմանալիորեն բարի գրքի հեղինակը կարծում է, որ փոքրիկ երեխաներն ամեն ինչ սովորելու ունակություն ունեն: Նա անդրադառնում է այն հսկայական ազդեցությանը, որ միջավայրն ունենում է նորածինների վրա, և առաջարկում է ուսուցման պարզ ու հասկանալի մեթոդներ, որոնք նպաստում են երեխայի վաղ զարգացմանը: Նրա կարծիքով՝ այն, ինչ մեծերը յուրացնում են մեծ դժվարությամբ, երեխաները սովորում են առանց մեծ ջանքերի: Եվ այս գործընթացում գլխավորը նոր փորձը ճիշտ ժամանակին կիրառելն է: Բայց այդ «ճիշտ ժամանակը» կարող է հասկանալ միայն նա, ով մշտապես երեխայի հետ է:

Գիրքը հասցեագրված է բոլոր այն մայրիկներին և հայրիկներին, որոնք ցանկանում են իրենց երեխաների առջև նոր հրաշալի հնարավորություններ բացել:




# Ամեն ինչի խանութը

*Բրեդ Սթոուն*

*թարգմանեց Արթուր Վարդիկյանը*

Amazon.com-ի՝ աշխարհի ամենահաջողակ ընկերություն-ներից մեկի և դրա հիմնադիր՝ նպատակասլաց և ապշեցուցիչ Ջեֆ Բեյզոսի անփոփոխ պատմությունը:

Amazon.com-ը սկսեց փոստով գրքեր առաքելուց, սակայն դրա հիմնադրի՝ Ջեֆ Բեյզոսի տեսլականն ավելին էր, քան միայն գրավաճառ լինելը: Նա ցանկանում էր, որ Amazon-ը դառնար ամեն ինչի խանութ՝ առաջարկելով անսահմանափակ ընտրության հնարավորություն և գայթակղիչ ցածր գներ:

Տեխնոլոգիայի ոլորտի նորարարներ Ջոբսի, Գեյթսի, Ցուկերբերգի համեմատ՝ Բեյզոսը ոչ հանրային անձնավորություն է: Բայց նա առանձնանում է նոր շուկաներ փնտրելու իր անդադար մղումով, նոր ռիսկային նախաձեռնություններով, ինչպիսիք են Kindle-ը և cloud computing-ը (ամպային հաշվարկը)՝ վերափոխելով մանրածախ առևտուրը այնպես, ինչպես Հենրի Ֆորդը հեղափոխեց արտադրությունը:

**Բիզնես / Կենսագրական**

Հայերեն
2020 թ., 16,5 x 24 սմ, 400 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-480-2

6900դր

Հղում




**Կենսագրական / Բիզնես**

Հայերեն
2020 թ., 16,5x24սմ, 384 էջ

Կոշտ կազմ

ISBN 978-9939-75-456-7

6900դր

Հղում

# Կոշկավաճառը. Nike-ը ստեղծողի հուշագրությունը

*Ֆիլ Նայթ*

*թարգմանեց Ռոզա Գրիգորյանը*

«Նյու Յորք Թայմսի» «Կոշկավաճառը» բեսթսելերը ներկայացնում է «Նայք» ընկերության հիմնադրի անցած ուղին: Ամենաճանաչված համաշխարհային բրենդներից մեկի հիմնադիր Ֆիլ Նայթն այժմ աշխարհի ամենահարուստ մարդկանցից է, բայց երիտասարդ տարիքում չէր կարող անգամ իրեն թույլ տալ «Ադիդաս» գնել: Կես դար առաջ Նայթը 50 դոլար է վերցնում հորից ու սկսում Ճապոնիայից ներկրված մարզակոշիկներ վերավաճառել: Իսկ այսօր ընկերության տարեկան շրջանառությունը 30 միլիարդ դոլար է:

Ֆիլ Նայթի անցած ճանապարհը լի էր փորձություններով ու դժվարություններով, սակայն նա կարողացավ այդ ամենը պատվով հաղթահարել: Նա մշտապես առեղծված է եղել շատերի համար, հազվադեպ է հարցազրույցներ տվել: Այս գրքում Նայթը բացահայտում է իր ընկերության պատմությունը, որը միլիոնավոր մարդկանց ներկայացրեց նորարարական մարզակոշիկներ և իրականացրեց նրանց երազանքը:




# Բրենդի հեղափոխություն

*Գրեգորի Վ. Դիլ*

*Գրեգորի Դիլը բիզնեսների և անհատների հեղափոխության վերաբերյալ բազմաթիվ բեսթսելլերների հեղինակ է: Նա նաև «Identity Publications»-ի հիմնադիրն է. կազմակերպություն, որը հրատարակում է գրքեր, որոնք պարունակում են կարևոր գաղափարներ:*

«Բրենդի հեղափոխություն» գրքի նպատակն է օգնել արդի բիզնեսի սեփականատերերին և ձեռնարկատերերին, որպեսզի նրանք ստեղծեն հեռանկարային և արժեքավոր գաղափար ու բովանդակություն, ունենան ինքնատիպ բրենդ ու կարողանան աշխարհին ներկայանալ իրենց յուրօրինակ պատմությամբ:

Գրեգորի Դիլի կողմից առաջարկվող ռազմավարությունները Ձեզ կօգնեն մեծացնել շուկայի վրա ունեցած ազդեցությունը գործունեության առաջին օրվանից մինչև հեռավոր ապագա: Ունենալով բրենդի ինքնատիպություն՝ Դուք կկարողանաք հասնել հաջողության՝ խուսափելով բազմաթիվ սխալներ գործելուց: Դա կարող է դառնալ հիմք՝ շուկայում գերիշխող դիրք գրավելու համար:

**Մարքեթինգ / Բիզնես**

Հայերեն
2019 թ., 14,5x20սմ, 304 էջ

Կոշտ կազմ

ISBN 978-9939-75-423-9

4900դր

Հղում




# Ու՞ր է իմ պանիրը

*Սպենսեր Ջոնսոն*

*թարգմանեց Նազելի Կարապետյանը*

**Հոգեբանություն / Մոտիվացիա**

Հայերեն
2015 թ., 15 x 21 սմ, 72 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-52-910-3

2800դր

Հղում

«Ո՞ւր է իմ պանիրը» աշխարհում ամենաշատ ընթերցված գրքերից է. այն պատմություն է փոփոխության մասին, որի գործողությունները ծավալվում են լաբիրինթոսի մեջ, որ-տեղ չորս հերոսներ առերեսվում են փոփոխության հետ, յուրաքանչյուրը ցուցաբերում է յուրօրինակ վարքագիծ. դրանով հեղինակը ներկայացնում է մեր իսկ վարքագիծը:

Գրքի հեղինակը՝ դոկտոր Սպենսեր Ջոնսոնը գրել է առա-ջին հայացքից պարզ մի պատմություն, որը սակայն ունի շատ կարևոր պատգամ և կարող է արմատապես փոխել մեր մոտեցումը փոփոխության նկատմամբ:

Բոլորը գիտեն, որ ամեն փոփոխություն չէ, որ լավ է կամ անգամ անհրաժեշտ: Սակայն, ապրելով մի աշխարհում, որն անընդհատ փոփոխվում է, օգտակար է ձեռք բերել անհրաժեշտ միջոցներն ու գործիքները, որոնք կօգնեն պատ-րաստ լինելու փոփոխություններին կյանքի ցանկացած պա-րագայում և չվախենալ դրանցից:

Հուսով ենք, որ ընթերցողը «Ո՞ւր է իմ պանիրը» պատմությունը այնպես կմեկնաբանի և կկիրառի կյանքում, որ կկարողանա ճիշտ կողմնորոշվել փոփոխությունների պարագայում և հաջողություն կունենա:




**Հոգեբանություն / Մոտիվացիա**

Հայերեն
2018 թ., 15 x 21 սմ, 96 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-289-1

2800դր

Հղում

# Լաբիրինթոսից դուրս

*Սպենսեր Ջոնսոն*
*թարգմանեց Նազելի Կարապետյանը*

Եվս մեկ անգամ Սպենսեր Ջոնսոնը իր պարզ պատմությամբ ներկայացնում է խորքային ճշմարտություններ, որոնք ուղենիշ կհանդիսանան առավել հաջողակ և լիարժեք լինելու կյանքում և աշխատանքում:

«Ո՞ւր է իմ պանիրը» պատմության մեջ երկու Փոքրիկ մարդիկ՝ Հըմն ու Գըմը, բախվում են անսպասելի փոփոխության հետ, երբ իրենց սիրելի Պանիրը հանկարծ անհետանում է: Գըմը կարողանում է ճիշտ կողմնորոշվել և ճանապարհ է ընկնում Նոր Պանիր որոնելու: Սակայն Հըմը շարունակում է դոփել նույն տեղում:

«Լաբիրինթոսից դուրս»-ը պատմում է Հըմի հետագա ճակատագրի մասին: Հուսով ենք, որ նրա բացահայտումները կօգնեն ձեզ գտնել ձեր կյանքում ծառացած լաբիրինթոսների հանելուկի պատասխանը: Հետևեք Հըմի և իր նոր ընկերոջ՝ Հույսի նոր ճանապարհորդությանը, և կբացահայտեք, թե ինչպես ավելին ստանալ կյանքից՝ մտածելով «արկղից դուրս», կամ այս դեպքում՝ Լաբիրինթոսից դուրս:




# Բիզնես էթիկայի պարզ արվեստը

*Թամարա Ավանեսյան*

Գրքում ներառված են գործարար հաղորդակցության գործընթացներում էթիկային և վարվելակերպի կանոններին առնչվող գործնական հարցերի մի շարք պատասխաններ: Հրատարակությունը նախատեսված է ղեկավարների և մասնագետների համար, որոնք ցանկանում են խորացնել իրենց գիտելիքները գործարար էթիկայի և վարվելակերպի կանոնների ոլորտում, ինչպես նաև ուսանողների, ասպիրանտների և մանկավարժների համար:

**Բիզնես**

Հայերեն
2018 թ., 14.5 x 20 սմ, 176 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-308-9

4800դր

Հղում




**Նոթատետր**

Հայերեն
2018 թ., 15 x 21 սմ, 240 էջ

Կոշտ կազմ
ISBN 978-9939-75-219-8

2850դր

Հղում

# Քո օրը քո ձեռքում
# Նոթատետր

*կազմեց՝ Շավարշ Կարապետյանը*

Աշխատանքային օրվա ճիշտ կազմակերպումը կարող է առնվազն 20-ից մինչև մի քանի 100 տոկոսով ավելացնել մեր արդյունավետությունը, որը հաճախ չափվում է, մի կողմից, արված գործով և վաստակած գումարով, մյուս կողմից՝ օրվա ավարտից հետո մեր ստացած բավականությամբ: Թուղթն ու գրիչը ճիշտ օգտագործվելու դեպքում «միս ու արյուն են ստանում» և անշունչ առարկաներից վերածվում մեզ հետ շփվող հավատարիմ ընկերոջ ու իմաստուն խորհրդատուի:

Ձեռնարկն ունի այդ ամբողջ պոտենցիալը, ու ձեր կողմից վստահության արժանանալու դեպքում այն սիրով կծառայի ձեզ: Կազմակերպե՛ք ձեր օրն ու ամեն օր հասե՛ք փոքր-ինչ գերազանցող արդյունքի, որից էլ կայուն կերպով կավելանա կյանքից ստացած ձեր հաճույքը:

*«Զարթուցիչ» հաջողության թրեյնինգի հիմնադիր՝*
*Գրիգոր Առաքելյան*




Ոչ գեղարվեստական

Հայերեն
2019 թ., 11,5 x 19 սմ, 152 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-435-2

2500դր

Հղում

# Անցյալ և մոտիվացիա

*Վարդան Հակոբյան*

«Անցյալ և մոտիվացիա» գրքի հեղինակը՝ երաժիշտ և դիրիժոր Վարդան Հակոբյանը, ունենալով մեծ փորձ դասական երաժշտության կատարողական արվեստում, բացահայտել ու վերլուծել է մի շատ հետաքրքիր թեմա՝ ինչ ազդեցություն ունեն կոմպոզիտորի մանկության իրադարձությունները նրա ստեղծագործական ոճի և ձեռագրի վրա:

Գիրքը կարող է օգտակար լինել երաժիշտների, և ոչ միայն երաժիշտների համար, քանի որ անդրադառնում է հայտնի կոմպոզիտորների անձնական կյանքի և պատմական տվյալ փուլի նրբություններին՝ այս երկուսի դիտանկյունից մոտենալով արդեն հայտնի ստեղծագործություններին: Գիրքն առհասարակ ուղղված է բոլոր նրանց, ովքեր սիրում են մտածել և ինքնուրույն եզրահանգումների գալ...

Դասական արվեստի հավերժական և միշտ պահանջված լինելն ունի իր գաղտնիքը, և գրքի հեղինակը գտել է ևս մեկ բանաձև՝ այդ գաղտնիքը բացահայտելու և կատարողական արվեստի միջոցով այն փոխանցելու լայն հանրությանը:




**Բիզնես, փիլիսոփայություն**

Հայերեն
2019 թ., 15 x 21 սմ, 112 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-366-9

2500դր

Հղում

# Աշխարհի մեծագույն վաճառականը

*Օգ Մանդինո*

Կարևոր չէ, թե ով ես դու այսօր... քանի որ այս համամարդկային բեսթսելերի հետ կսովորես՝ ինչպես փոխել կյանքդ՝ կիրառելով այն գաղտնիքները, որոնք կգտնես հնագույն գալարներում:

Այս գիրքը հարգանքի տուրք է հանճարեղ վաճառականին՝ Վ. Քլեմենտ Սթոունին, ով սերը, կարեկցանքը և վաճառելու արվեստի յուրօրինակ գաղափարախոսությունն իրար է միախառնել՝ ստեղծելով հաջողության մի դինամիկ փիլիսոփայություն, որը տարեցտարի ոգևորում և ուղղորդում է հազարավոր մարդկանց՝ բացահայտելու էլ ավելի մեծ երջանկություն, լինելու առողջ թե՛ հոգեպես, թե՛ ֆիզիկապես, վերագտնելու իրենց մտքի խաղաղությունը, լինելու ազդեցիկ և հարուստ:




# ՍԻՐԵԼՈՒ ԱՐՎԵՍՏԸ

*Էրիխ Ֆրոմ*

*թարգմանեց Ալինա Միրզոյանը*

«Սիրելու արվեստը» գիրքը միջազգային բեսթսելեր է, որ 60 տարի է, ինչ ցույց է տալիս միլիոնավոր ընթերցողների, թե ինչպես հասնել լիառատ, արդյունավետ կյանքի՝ զարգաց-նելով սիրո՝ իրենց թաքնված կարողությունները:

Մարդկանց մեծ մասը չի կարողանում սիրել այն մակար-դակի վրա, որն առավել կարեւորում է հեղինակը՝ Ֆրոմը. այն է՝ սեր, որ կազմված է հասունությունից, ինքնա-ճանաչողությունից եւ քաջությունից: Ինչպես ամեն արվեստ, սերն էլ պահանջում է հմտացում եւ կենտրոնացում, ինչպես նաեւ գիտելիք եւ ըմբռնում:

Իր «Սիրելու արվեստը» դասական գործում հայտնի հոգեվերլուծաբան եւ սոցիալական փիլիսոփա Էրիխ Ֆրոմը բացահայտում է սերը իր բոլոր կողմերով. ոչ միայն ռոման-տիկ սեր, որում արմատավորվել են կեղծ հայեցակարգեր և վեհ սպասումներ, այլ նաև եղբայրական սեր, էրոտիկ սեր, սեր սեփական անձի հանդեպ, սեր Աստծո հանդեպ և ծնողական սեր:

**Հոգեբանություն**

Հայերեն
2016 թ., 14 x 21 սմ, 224 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-75-105-4

2500դր

Հղում

# Օտարալեզու գրականություն




# Սուրբծննդյան երգը

*Չարլզ Դիքենս*

Չարլզ Դիքենսի «Սուրբծննդյան երգը» էբենեզեր Սկրուջ անունով մի ծեր, քարսիրտ և ժլատ մարդու մասին է, որին Սուրբծննդյան նախօրեին այցելում է իր նախկին բիզնես ընկեր Ջեյքոբ Մարլիի ոգին, ինչպես նաև Սուրբծննդյան Անցյալի, Ներկայի և Ապագայի ոգիները: Նրանց այցելություններից հետո Սկրուջը մեկ գիշերվա ընթացքում ինքնամաքրվում է և վերափոխվում:

**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2018 թ., 13 x 20 սմ, 96 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-75-301-0

1900դր

Հղում




# Ալիսի արկածները հրաշքների աշխարհում եվ հայելու աշխարհում

*Լուիս Քերոլ*

**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2020 թ., 13 x 20 սմ, 288 էջ

**Փափուկ կազմ**
ISBN 978-9939-75-418-5

3200դր

Հղում

«Ալիսի արկածները հրաշքների աշխարհում և հայելու աշխարհում» (հայտնի է կրճատ՝ «Ալիսը հրաշքների աշխարհում» վերնագրով) Լուիս Քերոլի հայտնի վեպն է, որն առաջին անգամ լույս է տեսել 1865թ.: Այն Ալիս անունով մի աղջկա մասին է, որը ճագարի բնի փոսից ընկնում է մի երևակայական աշխարհ՝ բնակեցված արտասովոր, մարդակերպ արարածներով: Պատմությունը լի է տրամաբանական խաղերով. հետաքրքիր է և՛ մեծահասակների, և՛ երեխաների համար:

«Ալիսը հրաշքների աշխարհում» վեպը համարվում է գրական անհեթեթության ժանրի լավագույն օրինակներից: Այն մեծ ազդեցություն է ունեցել ժողովրդական մշակույթի, գրականության և հատկապես ֆենտեզի ժանրի վրա:




# Աննան Կանաչ կտուրներից

*Լյուսի Մոդ Մոնթգոմերի*

«Աննան Կանաչ կտուրներից» վեպը, 1908 թվականի առաջին հրատարակությունից ի վեր, դարձել է համաշխար-հային բեսթսելեր: Վեպը վաճառվել է ավելի քան 50 միլիոն օրինակով և թարգմանվել 36 լեզուներով:

Կանադուհի Լյուսի Մոդ Մոնթգոմերիի այս ստեղծա-գործությունը բազմիցս էկրանավորվել է, այդ թվում` PBS, The Disney Channel և Netflix ընկերությունների կողմից` վաստակելով թե՛ երեխաների, թե՛ մեծահասակների սերն ամբողջ աշխարհով:

Այն պատմում է մի որբ աղջնակի` Աննա Շիրլիի մասին: Մեթյու և Մարիլա Քաթբերտները` միջին տարիքի քույր և եղբայր, որոշում են տղա որդեգրել, ով կօգներ Էվոնլի մտացածին գյուղում գտնվող իրենց ագարակի աշխա-տանքները վարելիս, սակայն տեղի է ունենում սխալմունք, ու նրանց մոտ են ուղարկում կարմրահեր, խելացի ու երազկոտ Աննա Շիրլիին: Վեպում ներկայացված են Աննայի արկածները Կանաչ կտուրներում, որտեղ աղջիկը վերջապես գտնում է իր տունը:

**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2019 թ., 13 x 20 սմ, 300 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-353-9

2900դր

Հղում

# Երկարոտն հայրիկը

*Ջին Ուեբսթեր*




**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2019 թ., 13 x 20 սմ, 192 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-352-2

2500դր

Հղում

Ջին Վեբսթերի «Երկարոտն հայրիկը» նամակագրական վեպը լույս է տեսել 1912 թ.: Գլխավոր հերոսուհին Ջերուշա «Ջուդի» էբոթն է, ով մեծացել է մանկատանը: Այստեղ երեխաներն ամբողջությամբ կախված էին բարեգործությունից և ստիպված էին կրել այլոց հին հագուստները:

17 տարեկանում աղջիկն ավարտեց կրթությունը մանկատանը և նրան հայտնում են, որ հովանավորներից մեկն առաջարկել է վճարել իր հետագա կրթության համար:

Մի օր Ջուդին պատահական տեսնում է իր բարերարի ստվերը. նա բարձրահասակ, երկարոտն տղամարդ էր: Հենց այդ պատճառով էլ նա իր հովանավորին կատակով «երկարոտն հայրիկ» է կոչում: Գրքի վերջում երկարոտն հայրիկի ինքնությունը բացահայտվում է որպես Ջերվիս Փենդլթոն, ում աղջիկը հանդիպել ու սիրահարվել էր՝ առանց իմանալու, որ նա նույն երկարոտն հայրիկն է:




**Գեղարվեստական / արձակ**

**Անգլերեն**
2019 թ., 13 x 20 սմ, 272 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-389-8

2900դր

Հղում

# Ֆրանկենշթեյն

*Մերի Շելլի*

«Ֆրանկենշթեյնը» Մերի Շելլիի հայտնի ստեղծագործութ-յունն է, որը առաջին անգամ տպագրվել է անանուն 1818 թվականին:

Վեպում Վիկտոր Ֆրանկենշթեյնը, որ երիտասարդ ուսանող է Ժնևից, ստեղծում է կենդանի արարած մահացած մատերիայից: Նա մահացած մարդկանց տարբեր օրգան-ներից հավաքում է մարդու նմանակ, իսկ հետո գտնում նրան կենդանացնելու «գիտական» միջոց՝ իրականացնելով «կյանքի ստեղծում՝ առանց կնոջ» հայեցակարգը: Սակայն պարզվում է, որ կենդանացած արարածը հրեշ է:

Այս հրեշն էլ դառնում է իր արարչի և նրա ընտանիքի կործանման պատճառը:




# Հպարտություն և նախապաշարմունք

*Ջեյն Օսթին*

**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2019 թ., 13 x 20 սմ, 381 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-75-350-8

3300դր

Հղում

«Հպարտություն և նախապաշարմունք» վեպը Ջեյն Օսթինի ամենահայտնի ստեղծագործություններից է, որը հրատարակվել է 1813 թ.: Այն նկարագրում է գլխավոր հերոսուհու՝ Էլիզաբեթ Բենեթի զգացմունքային զարգացումը: Նա աստիճանաբար հասկանում է արագ դատողություններ անելու սխալը և սկսում է ընկալել ու գնահատել մակերեսայինի և էականի տարբերությունը:

Անգլիական գավառական հասարակության կենցաղի ֆոնին, որի բարքերը հեղինակը նկարագրում է նուրբ հեգնանքով և զարմանալի հետևողականությամբ, զարգանում են հպարտ պարոն Դարսիի և նախապաշարմունքով լի Էլիզաբեթ Բենեթի հարաբերությունները, որն էլ աննկատ վերածվում է սիրո: Այս գիրքը մշտապես հիացրել է ընթերցողներին՝ հայտնվելով թե՛ գրականագետների, թե՛ շարքային ընթերցողների ամենասիրելի գրքերի ցանկում: Այն դարձել է անգլիական գրականության ամենահայտնի վեպերից մեկը՝ ավելի քան 20 միլիոն վաճառված օրինակով:

# Քույր Քերի

## *Թեոդոր Դրայզեր*




**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2019 թ., 13 x 20 սմ, 528 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-342-3

1900դր

Հղում

Երբ երիտասարդ աղջիկը տասնութ տարեկանում հեռանում է տնից, նրան հիմնականում երկու ելք է մնում. նա կամ հայտնվում է ապահով ձեռքերում և դառնում է ավելի լավը, կամ կտրուկ անկում է ապրում: «Քույր Քերի» վեպում հեղինակը պատմում է փոքր քաղաքում ապրող հմայիչ աղջկա մասին, որ տեղափոխվում է մշուշոտ հավակնություններով լի մեծ քաղաք: Տղամարդիկ օգտագործում են նրան, Քերին էլ իր հերթին նրանց է օգտագործում, որպեսզի դառնա Բրոդվեյի հաջողակ դերասանուհի: Իսկ Ջորջ Հրսթվուդը, որ լքում է սեփական ընտանիքն ու փախչում նրա հետ, կորցնելով սեփական կյանքի նկատմամբ վերահսկողությունը, աղքատանում է, իսկ վերջում ինքնասպանություն է գործում:

«Քույր Քերի»-ն ամերիկյան նատուրալիզմի առաջին գլուխգործոցն էր՝ քաղաքային կյանքի քմահաճույքներով, հերոսների հիշարժան ընտրությամբ, ազդեցիկ պատմողական գծով և հնարամիտ հերոսուհիով, որ պատիժ չի կրում մարդկության ավանդական տեսակետների հանդեպ գործած մեղքերի համար:




**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2019 թ., 13 x 20 սմ, 544 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-75-371-3

4200դր

Հղում

# Ջեյն էյր

*Շարլոթ Բրոնթե*

Անգլիացի գրող Շառլոթ Բրոնթեի «Ջեյն էյր» նովելն առաջին անգամ հրատարակվել է Քարեր Բելլ գրչանվամբ 1847թ. հոկտեմբերի 16-ին: Ջեյն էյրը չունի արտակարգ գեղեցկություն և դյութիչ հմայք, ինչի միջոցով իր գեղարվեստական նախորդները ճանապարհ էին հարթում աշխարհում: Փոխարենը, Ջեյնն ապավինում է ջանասիրության և խոհեմության իր առաքինություններին՝ իրեն դրսևորելով որպես արժանապատիվ և կյանքով լեցուն անհատականություն:

«Ջեյն էյր»-ի ակնթարթային և տևական հաջողությունը ապացուցեց, որ Բրոնթեի բնազդները ճիշտ էին: Իր ժամանակաշրջանի և հետագա տարիների ընթերցողները իրենց սրտերից ներս ընդունեցին աղքատացած որբ աղջկան՝ հետևելով նրա ընթացքին՝ անգութ հարազատների խնամակալությունից մինչև դաժանաբարո գիշերօթիկ դպրոց և դաստիարակչուհու դժվարին աշխատանք: Ջեյնի առաջին հանձնարարությունը Թորնֆիլդում, որի հպարտ և հեգնական տերը թաքցնում է մի անպատմվաբեր գաղտնիք, գրավում է ընթերցողներին՝ բացահայտելու մարդկային սրտի առեղծվածները:

# Մեծն Գեթսբին

*Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդ*




Գրքի առաջին հրատարակությունը (Scribners) 1925 թվականի ապրիլին էր: Չնայած սկզբնական անհաջողություններին, գիրքը մեծ ճանաչում ստացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին և դարձավ ամերիկյան դպրոցների ուսումնական ծրագրի մի մասը:

Այսօր «Մեծն Գեթսբին» համարվում է դասական գրականության գլուխգործոցներից մեկը և ունի «Ամերիկյան մեծագույն վեպ» կոչումը:

**Գեղարվեստական / արձակ**

**Անգլերեն**
2019 թ., 13 x 20 սմ, 192 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-317-1

2500դր

Հղում




**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2020 թ., 13 x 20 սմ, 384 էջ

Փափուկ կազմ

ISBN 978-9939-75-419-2

3500դր

Հղում

# Ռոբինզոն Կրուզո

*Դանիել Դեֆո*

Գրքում ներկայացվում է գլխավոր կերպարի (ծննդյան անունն է Ռոբինզոն Քրեցներ) ինքնակենսագրականը՝ մի նավաբեկյալի, որը 28 տարի անցկացնում է Տրինիդադին մոտ գտնվող մի հեռավոր արևադարձային անմարդաբնակ կղզում: Նախքան վերջնականապես փրկվելը՝ այստեղ նա հանդիպում է մարդակերների, գերիների, խռովարար նավաստիների:

Ամենայն հավանականությամբ, «Ռոբինզոն Կրուզոն» գրելիս Դեֆոն մասամբ հիմնվել է Ալեքսանդր Սելքըրքի իրական կյանքի պատմության վրա: Վերջինը շոտլանդացի նավաստի էր, որին, նավապետի հետ ծագած վեճի պատճառով, 1704թ. իր իսկ պահանջով իջեցնում են Խաղաղ օվկիանոսի ափին գտնվող «Մաս-ա-Տիերա» անվամբ անմարդաբնակ կղզի, որտեղ նա մնում է մինչև 1709թ.: 1966թ. այս կղզին, որն այժմ Չիլիի մասն է կազմում, վերանվանվեց «Ռոբինզոն Կրուզո» կղզի: Սակայն Դեֆոն իր վեպը Սելքըրքի պատմությունից անդին է տանում՝ միահյուսելով պուրիտանական հոգևոր ինքնակենսագրականի ավանդույթները և մարդկանց բնույթի ուսումնասիրությունը:




# Արքայազնը և աղքատը

*Մարկ Տվեն*

**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2020 թ., 13 x 20 սմ, 264 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-463-5

2900դր

Հղում

«Արքայազնը և աղքատը» Մարկ Տվենի հանրահայտ վեպն է, որն առաջին անգամ լույս է տեսել 1881թ. Կանադայում և ապա 1882թ.՝ ԱՄՆ-ում: Հեղինակի առաջին փորձն է պատմական գեղարվեստական գրականության ժանրում: Դեպքերը տեղի են ունենում 1537թ. Լոնդոնում՝ երկու պատանիների շուրջ, որոնք ունեն միանման արտաքին տեսք: Մեկի անունը Թոմ Քենթի է, որը աղքատ ընտանիքից է և ունի բռնարար հայր, մյուսը արքայազն Էդվարդն է՝ Հենրիխ VIII-ի որդին:

Վերադառնալով եվրոպական երկրորդ շրջագայությունից՝ Տվենը ուսումնասիրում է Անգլիայի և Ֆրանսիայի պատմությունը: Նա ի սկզբանե մտադրվել էր այս պատմության վերաբերյալ պիեսս գրել, որի ժամանակաշրջանը կլիներ Վիկտորիանական Անգլիան, սակայն այնուհետև որոշեց այն տեղափոխել ավելի հին ժամանակաշրջան:

Տվենը գիրքը նվիրել է իր դուստրերին՝ Սյուզիին և Կլարային:




# Դորիան Գրեյի դիմանկարը

*Օսկար Ուայլդ*

«Դորիան Գրեյի դիմանկարը» վեպը համարվում է անգլիացի գրող Օսկար Ուայլդի ամենանշանավոր ստեղծագործությունը: Սա Ուայլդի միակ հրատարակված վեպն է և աշխարհի ամենաընթերցվող գրքերից մեկը: Առաջին անգամ հրատարակվել է 1890 թվականի հուլիսին անգլիական թերթերից մեկում: Առանձին գրքով տպվել է միայն 1891 թվականի ապրիլին: Այդ հրատարակչությամբ, քննադատներն ու գրաքննիչները շատ բաներ էին հեռացրել, ավելացրել վեպում:

**Գեղարվեստական / արձակ**

**Անգլերեն**
2019 թ., 13 x 20 սմ, 192 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-325-6

2500դր

Հղում




# Բժիշկ Ջեքիլի և պարոն Հայդի տարօրինակ պատմությունը

*Ռոբերտ Լուիս Սթիվենսոն*

«Բժիշկ Ջեքիլի և պարոն Հայդի տարօրինակ պատմությունը» գոթական վիպակ է: Այն պատմում է Գաբրիել Ջոն Աթերսոն անունով մի լոնդոնաբնակ փաստաբանի մասին, որն ուսումնասիրում է իր վաղեմի ընկեր բժիշկ Հենրի Ջեքիլի և չարանենգ Էդուարդ Հայդի հետ կապված տարօրինակ եղելությունները:

Վիպակի ազդեցությունն այնքան մեծ է եղել, որ անվանումը մտել է անգլերեն լեզվի բառապաշար որպես «Ջեքիլ և Հայդ» արտահայտություն, որը վերաբերում է երկակի բնույթի տեր մարդկանց՝ երբեմն շատ բարի, երբեմն էլ՝ ապշելու աստիճանի չար:

**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2019 թ., 13 x 20 սմ, 96 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-313-3

1900դր

Հղում




# Երեքը մի նավակում՝ չհաշված շունը

*Ջերոմ Ք. Ջերոմ*

1889 թվականին լույս տեսած «Երեքը մի նավակում՝ չհաշված շունը» վեպը հումորային պատմություն է Ջերոմ Ք. Ջերոմի՝ Թեմզա գետով երկշաբաթյա նավարկության մասին՝ Քինգսթոնից Օքսֆորդ և հակառակ ուղղությամբ: Ի սկզբանե նախատեսված էր, որ գիրքը պետք է լիներ տեղանքի պատմությունը ներկայացնող լուրջ ճանապարհորդական ուղեցույց, սակայն հումորային տարրն այնքան գերակշռող եղավ, որ լուրջ և փոքր-ինչ սենտիմենտալ հատվածները կարծես շեղում լինեին վեպի զավեշտական բնույթից:

Երեք տղամարդկանց նախատիպ են ծառայել հենց ինքը Ջերոմը և իր երկու ընկերները՝ Ջորջ Ուինգրեյվը և Կառլ Հենչելը, որոնց հետ հաճախ Ջերոմը նավակով ուղևորությունների էր գնում: Մոնթմորենսի անունով շունը միանգամայն մտացածին կերպար է, սակայն, ինչպես հեղինակն է խոստովանում, այն կերտվել է ներքին գիտակցական մի տարածքում, որտեղ բոլոր անգլիացիներն ունեն այդ շան տիպարից մի մասնիկ:

**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2020 թ., 13 x 20 սմ, 248 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-462-8

2900դր

Հղում




# Թոմ Սոյերի արկածները

*Մարկ Տվեն*

Մարկ Տվենի «Թոմ Սոյերի արկածները» գիրքը լույս է տեսել 1876թ.: Վեպի գլխավոր հերոսը 12-ամյա Թոմ Սոյերն է, որը մոր մահից հետո ապրում է մորաքույր Պոլլիի հետ: Վեպում նկարագրվում են Թոմի և նրա ընկերների մի քանի ամիս տևող արկածները:

Այս արկածների ընթացքում Թոմը հասցնում է գտնել իր սիրուն՝ Բեքի Թեթչերին, ականատես լինել սպանության ու բռնել մարդասպանին, փախչել տնից, դառնալ ծովահեն և ապրել մի կղզում, գտնել գանձ ու ողջը կիսել իր ընկեր Հեքլբերի Ֆիննի հետ:

**Գեղարվեստական / արձակ**

**Անգլերեն**
**2019 թ., 13 x 20 սմ, 271 էջ**

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-372-0

2900դր

Հղում




# Գանձերի կղզին

*Ռոբերտ Լուիս Սթիվենսոն*

«Գանձերի կղզին» Ռոբերտ Լուիս Սթիվենսոնի արկածային վեպն է, որը պատմում է ծովահենների և անմարդաբնակ կղզում թաքցված գանձերի մասին: Վեպն անհերքելի ազդեցություն է թողել ժողովրդական ընկալման վրա՝ կապված այն ամենի հետ, ինչ վերաբերում է ծովահեններին, «X» նշանով գանձերի քարտեզներին, առագաստանավերին, «Սև նշան»-ին, արևադարձային կղզիներին և թութակն ուսին միոտանի նավաստիներին:

«Գանձերի կղզին» պատմություն է, որտեղ ականատես ենք լինում գլխավոր հերոսի հասունացմանը: Այն նշանակալի է իր միջավայրով, կերպարներով և արկածալի իրադարձություններով: Երբևէ ամենից շատ բեմադրված և էկրանավորված վեպերից է: Առաջին անգամ հրատարակվել է 1883 թ., նոյեմբերի 14-ին:

**Գեղարվեստական / արձակ**

Անգլերեն
2020 թ., 13 x 20 սմ, 264 էջ

**Փափուկ կազմ**

ISBN 978-9939-75-420-8

2900դր

Հղում




# Հայ ժողովրդական առակներ (անգլերեն)

*կազմեց Արմեն Սարգսյանը*

Մանկական գրականություն

Անգլերեն
2012 թ., 14.5 x 20 սմ, 160 էջ

Փափուկ կազմ
ISBN 978-9939-52-556-3
3900դր

Էլ. գիրք
ISBN 978-9939-52-556-3
2350դր

Հղում

Ժողովածուն կազմելիս հեղինակն օգտվել է Հայաստանում և Սփյուռքում 19-21-րդ դարերում հրատարակված տարաբնույթ գրականությունից: Նյութերի պատկառելի մասն ընտրվել է բանագիտական և ազգագրական ժողովածուներից, մի մասը՝ բարբառագիտական ուսումնասիրությունների նմուշների բաժիններից, մյուս մասը՝ առանձին տեղավայրերին նվիրված և այլ գրքերից, ինչպես նաև՝ որոշ անձնական հավաքածուներից:

Ժողովածուում ընդգրկվել են առակի հետևյալ տեսակները՝

ա/ դասական՝ այլաբանական առակներ, որոնց հերոսները մեծ մասամբ կենդանիներ են.

բ/ առակատիպ ժողովրդական զրույցներ.

գ/ հեքիաթատիպ առակներ.

դ/ երգիծական առակ-զվարճապատումներ.

ե/ երկխոսական առակ-առածներ:




# Ողջո՜ւյն, Ադա՛մ

## *Սամվել Բիշարյան*

Սամվել Բիշարյանի Hello, Adam! (Ողջո՜ւյն, Ադա՛մ) գիրքը նախատեսված է միջին տարիքի դպրոցականների համար որպես օժանդակ միջոց անգլերենի գիտելիքները զարգացնելու համար: Այն նաև կարող է օգտակար լինել անգլերենով հետաքրքրվող անձանց ամենալայն շրջանակների համար:

Պատմվածքներից երկուսը Ապրիլյան պատերազմի հերոս Ադամ Սահակյանի մինչպատերազմյան շրջանի մասին է, որտեղ տղան հանդես է գալիս որպես գործող կերպար: Պատմվածքներից 5-ում Ադամը այլ կերպարների կողմից մեծարվում է որպես 2016 թ-ի Ապրիլյան պատերազմի հերոս:

**Գեղարվեստական**

**անգլերեն**
**2018 թ., 17 x 24 սմ, 168 էջ**

**Փափուկ կազմ**
ISBN 978-9939-75-304-1

2990դր

Հղում




# Ներսես Մաժանը և ուրիշները

Գիտնական, աստղաֆիզիկոս Հայկ Հարությունյանն ու գրող, հրապարակախոս Ռուսլան Սաղաբալյանը ռուսերենով կազմել են հայ ֆանտաստիկ գրականության ներկայացուցիչների լավագույն ստեղծագործությունների այս ծավալուն հավաքածուն՝ «Ներսես Մաժանը և ուրիշներ» վերնագրով:

Ներսես Մաժանը Կարեն Սիմոնյանի հայտնի «Դեղագործ Ներսես Մաժանը» վեպի հերոսն է: Համաշխարհային գրականության մեջ շատ են եղել դեղագործներ ու ալքիմիկոսներ. Մաժանը նրանց մեջ իր արժանի տեղն է զբաղեցնում:

Ժողովածուում տեղ է գտել Կարեն Սիմոնյանի լավագույն պատմվածքներից մեկը, ինչպես նաև Պերճ Զեյթունցյանի «Մի նայիր հայելու մեջ» ստեղծագործությունը և յոթանասունականներին գրված նրա առակներից մեկն այն մասին, թե ինչ կլինի, եթե հանկարծ բացվեն գազանանոցների վանդակների դռներն ու գազաններին թողնեն ազատության մեջ:

**Գիտաֆանտաստիկ**

**Ռուսերեն**
**2019 թ., 14,5 x 20 սմ, 536 էջ**

**Փափուկ կազմ**
ISBN 978-9939-75-392-8

5000դր

Հղում